

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Բոլորը Դեպի Արտափերձ Ընտրություններ

Հայաստանի Ազգային ժողովը երկրորդ անգամ Նիկոլ Փաշինեանին «չընտրեց» վարչապետ՝ ճամբայ հարթելով խորհրդարանական արտափերձ ընտրություններուն, որոնք նախատեսուած են Յունիսի 20-ին:

Ընտրարշավը արդէն իսկ սկսած է ու տարբեր կուսակցութիւններ կը յայտարարեն իրենց մասնակցութեան ձեւաչափի մասին՝ ոմանք առանձին ցուցակներով, իսկ ուրիշներ որպէս դաշինք:

Այս առթիւ ականատես կըլլանք բազմաթիւ ուշագրաւ երեւոյթներու, որոնք շատ յաճախ չեն տեղաւորուիր տրամադրութեան մէջ ու տարակուսանք կը յառաջացնեն շատերու մօտ: Տակաւին կարճ ժամանակ առաջ »Հայրենիքի փրկութեան շարժում« անուան տակ հանդէս եկող ընդդիմադիր կուսակցութիւններն ու գործիչները, երդում կ'ընէին, որ կը մերժեն մաս կազմել Փաշինեանի կազմակերպած ընտրութիւններուն, առաջինը անոնք, անձնատուր ըլլալով սկսան յայտարարել մասնակցութեան մասին: Աւելին, այդ շարժումին մաս կազմողները չկարողացան նոյնիսկ միասնական ճակատով ընտրութիւններուն ներկայանալու շուրջ համաձայնութեան գալ ու այժմ ստիպուած են պայքարելու ոչ միայն Փաշինեանի դէմ, այլ եւ՝ իրար: Ամիսներ տեւող փողոցային պայքարի ծախող ու ապարդիւն փորձը եկաւ համոզելու ընդդիմադրութեան, որ չունին բաւականաչափ ժողովրդային համակրանք եւ աջակցութիւն, որ կրնայ բաւարարել բոլորի ախորժակները՝ մտնելու խորհրդարան:

Այսօրուայ դրութեամբ արմատական ընդդիմութիւնը բաժնուած է երեք մասի: Ռոպերթ Քոչարեանի գլխաւորած «Հայաստան» դաշինքը, որուն մաս կը կազմեն ԴԶԴ-ն ու «Վերածնունդ Հայաստան» նորաստեղծ կուսակցութիւնը, Սերժ Սարգսեանի գլխաւորած Հանրապետական կուսակցութեան եւ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան նախկին պետ՝ Արթուր Վանցեանի հիմնած «Հայրենիք» կուսակցութեան միջեւ ստեղծուած դաշինքը եւ մեծահարուստ գործարար Գագիկ Ծառուկեանին պատկանող »Բարգաւաճ Հայաստան« կուսակցութիւնը, որ ընտրութիւններուն կը մասնակցի առանց որեւէ մէկ այլ ուժի հետ դաշինք կազմելու: Այս երեքին մէջէն ամենէն ակաւաճ խոյժ կերպով հրապարակ նետուած է Քոչարեանը, որ կը խորհի

Հայաստանի Ազգային Ժողովը Լուծարուեցաւ Արտափերձ Ընտրություններ Յունիսի 20-ին

Հայաստանի Ազգային ժողովը երկրորդ փուլով կրկին Նիկոլ Փաշինեանը չընտրեց վարչապետի պաշտօնին, ինչպէս եւ նախատեսուած էր. այսպիսով, Սահմանադրութեան համաձայն՝ իրաւունքի ուժով Եօթերորդ գումարման Ազգային ժողովը լուծարուեցաւ:

Այժմ Ազգային ժողովի արտահերթ ընտրութիւններ պիտի կայանան Յունիսի 20-ին:

«Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ վարչապետի ընտրութեան համար հրաւիրուած յատուկ նիստին, պատգամաւորներու ընդհանուր թիւի առնուազն մէկ երրորդի կողմէ վարչապետի թեկնածու առաջադրուած Նիկոլ Փաշինեան չստացաւ ընտրուելու համար բաւարար ձայներ: Անոր թեկնածութեան «կողմ» եւ «դէմ» քուէարկեցին մէկական պատգամաւորներ, 76 պատգամաւոր քուէարկեց «ձեռնպահ»: Վարչապետի ընտրութեան համար անհրաժեշտ էր 67 «կողմ» ձայն:

Անկախ Հայաստանի պատմութեան մէջ երկրորդ անգամն է, որ Ազգային ժողովը կ'արձակուի սահմանուած ժամկէտէն շուտ: 2018-ի Նոյեմբերին եւս ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականէն ետք խորհրդարանը ցրուած էր նոյն ընթացակարգով:

Վարչապետի միակ թեկնածուն Նիկոլ Փաշինեանն էր: Անոր թեկնածութիւնը առաջադրած էր ԱԺ «Իմ Քայլը» խմբակցութիւնը:



Նիկոլ Փաշինեանի թեկնածութիւնը վարչապետի պաշտօնին առաջադրուած էր նաեւ վարչապետի ընտրութեան առաջին փուլին, սակայն այն պաշտօնական բնոյթ կը կրէր, քանի որ Ապրիլ 25-ին, վարչապետի պաշտօնէն հրաժարական ներկայացնելով, Նիկոլ Փաշինեանը սկիզբ դրաւ խորհրդարանը իրաւունքի ուժով լուծարելու եւ խորհրդարանական արտահերթ ընտրութիւններու կայացման գործընթացին: Մայիս 3-ի ԱԺ հերթական նիստին վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան չէր ընտրուած վարչապետի պաշտօնին:

Կեդրոնական Ընտրական Ցանձնաժողովը Մայիս 11-ի իր նիստին

որոշեց, որ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն առթիւ նախընտրական քարոզարշաւը պիտի սկսի Յունիսի 7-ին եւ պիտի տեւէ մինչեւ Յունիսի 18-ը:

Ի տարբերութիւն նախորդ անգամներուն, այս ընտրութիւնները տեղի պիտի ունենան ամբողջութեամբ կուսակցութիւններու կամ դաշինքներու ցուցակներով՝ առանց անհատ թեկնածուներու անուններ նշելու: Խորհրդարանի տեղերը պիտի բաշխուին համամասնական սկզբունքով: Խորհրդարան մուտք գործելու նուազագոյն շեմը՝ կուսակցութիւններու համար 5 տոկոս է, իսկ դաշինքներու համար՝ 7 տոկոս:

Լաւրով Պաքուի Մէջ Ընդգծած Է՝ Պէտք Է Լուծել Ռազմագերիներու Հարցը

Անցեալ շաբաթ ընթացքին Երեւան կատարած իր այցելութենէն ետք, Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով Մայիս 10-ին ժամանեց Պաքու:

«Կողմերը ունին ընդհանուր մօտեցում, որ կան երթուղիներ, որոնց շուրջ ամէնէն դիւրինն է պայմանաւորուելը, եւ առաջիկային մենք կը սպասենք հայկական կողմի պատասխանին», - պատասխանելով, թէ ե՞րբ պիտի սկսին փոխադրային միջանցքի կառուցման աշխատանքները եւ ի՞նչ երթուղիներու մասին է խօսքը, հարցին՝ համատեղ մամուլի ասուլիսի ընթացքին ըսած է Ատրպէյճանի ԱԳ նախարարը:

Սերկէյ Լաւրով, սակայն, ընդգծած է. «Եթէ դեռ համաձայնութիւն չկայ երթուղիներու շուրջ, դժուար է խօսիլ ժամկէտներու մասին: Այդ հարցը պէտք է կարգաւորել հաշուի առնելով բոլոր կողմերու շահերը, անոնց կարգին՝ տարածաշրջանի երկիրներու՝ Ռուսաստանի, Թուրքիոյ եւ Իրանի»:

Լաւրովին ընդունած է Ատրպէյճանի նախագահ՝ Իլհամ Ալիեւը, որ Ռուսաստանի արտաքին



Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով

գործոց նախարարի այցի օրը հարցազրոյց տուած էր ատրպէյճանական պետական հեռուստաընկերութեան եւ ըսած, թէ Չանգեզուրի միջանցքը պիտի ըլլայ, առաջիկային պիտի սկսին երկաթուղագիծի կառուցման աշխատանքները, եւ Հարաբաղի խնդիրը վերջնական

Լաթվիան ճանցած Է Եւ Դատապարտած՝ Հայոց Ցեղասպանութիւնը

Լաթվիան պաշտօնապէս ճանցած եւ դատապարտած է Հայոց Ցեղասպանութիւնը. կողմ արտայայտուած են խորհրդարանի՝ Սէյմի 100 անդամներէն 58-ը: Այս մասին Դիմատետրով գրած է Լաթվիոյ, Լիթուանիոյ եւ Էսթոնիոյ մօտ Հայաստանի դեսպան՝ Տիգրան Մկրտչեան, որ աւարտած է իր դիւանագիտական առաքելութիւնը Պալթեան երկիրներու մէջ:

«Այն, ինչ տարիներ առաջ դժուար պատկերացնելի էր, այսօր դարձաւ իրականութիւն: Մա վերջին տարիների տքնաշան աշխատանքի արդիւնք է, որտեղ էական է եղել դիւանագիտութեան գինանոցի գրեթէ ողջ պաշարի կիրառումը՝ քաղաքական ուժեղ շփումները, խորհրդարանական դիւանագիտութիւնը, մշակութային դիւանագիտութիւնը (թերեւս ամենատեսանելին է եղել, նաեւ խիստ կարեւոր), համայնքային եւ Հայ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Քաղաքական Դիսկուրսը Վերածուել է Անիմաստ Լեզուակոուի

ՊՕՐՈՍ ՊՕՐՈՍԵԱՆ

Ընդդիմութեանը, փաստօրէն, այդպէս էլ չյաջողուեց մէկ ընդհանուր ճակատ ձեւաւորել ընտրութիւններէն առաջ եւ անգամ չօգնեց առաջին նախագահի հրապարակային առաջարկ-բացայայտումը:

Ընդդիմութեան միասին ընտրութիւններէի գնալը, իհարկէ, ուստիստական միտք էր եւ քաղաքական հնարք: Այնուամենայնիւ, բոլոր ընդդիմադիր ուժերը, իբրեւ իրենց հիմնական նպատակ, Փաշինեանին իշխանութիւնից հեռացնելն են հռչակել, եւ դա, թերեւ, շատ պարզ եւ հասկանալի է՝ հաշուի առնելով պատերազմում կրած պարտութիւնը, հազարաւոր զոհերը, տարածքային կորուստները: Թիրախային եւ տեխնոլոգիական առումով ամէն ինչ շատ պարզ եւ հասկանալի է, բայց զարգացող քաղաքական առումով կան շատ հարցեր, որոնց պատասխանները դեռ չեն հնչել:

Քաղաքական գործիչներին մոլորեցնում է իրենց առաջ քաշած թէզը՝ ժողովուրդը ոչինչ չի հասկանում, եւ նրանք անգամ չեն էլ փորձում որեւէ հասկանալի միտք յայտնել կամ զարգացող առաջարկել: Բոլոր հրապարակային ելոյթները սկսւում եւ աւարտւում են վիրաւորանքներով եւ պիտակներով՝ «դաւաճան», «հողատու», «կապիտուլեանտ», «ազգադաւը պէտք է հեռանայ, որ կարողանանք վերականգնել մեր ազգային ոգին եւ պետականութիւնը»: Այս մէկ տողով ասուող մտքերը գուցէ արտայայտողին ինչ-որ յոյսեր են

ներշնչում, թէ հօգը ու ջախջախիչ բացայայտումներ են անում եւ քաղաքական դիւրեկենտներ շահում, բայց ժողովրդի մօտ դա աթոռակուրի տպաւորութիւն է թողնում: Նախ՝ պետականութիւն ասուածը, յատկապէս մեր պարագայում, շատ լուրջ հակասութիւնների, անգամ՝ թշնամանքի մէջ է գտնուում ազգային զարգացման սուբեկտիւն հետ, եւ դրանք արտասանողը, հաւանաբար, ընկալումների խնդիր ունի կամ իր լսարանի ինտելեկտուալ կարողութիւններն է թերագնահատում: Սա շատ կարեւոր է, որովհետեւ խնդիրն ամենեւին էլ Նիկոլ Փաշինեանի մէջ չէ, այլ շատ աւելի խորն է:

Բոլորս յիշում ենք, որ ներկայիս՝ «հողատու», «դաւաճան», «ազգակործան» բղաւող հասարակութեան ճնշող մեծամասնութիւնը մինչեւ յեղափոխութիւնը «հաբուցած», «գոբբա», «բեսպրեդել», «թալանչի» էր բղաւող ու թիրախաւորում օդիոզ կերպարներին՝ պատգամաւորներ, ուսումնական գործիչներ, անգամ ազգային հերոսներ: Եւ օդիոզները, թէեւ իշխանութեան հիմնական յենարանն էին հանդիսանում, բայց հասարակական կարծիքի ճնշման ներքոյ հետզհետէ հեռացուեցին իշխանութիւնից, եւ 2018-ի յեղափոխութեան ժամանակ նրանց մեծ մասն արդէն պատգամաւոր, փոխնախարար կամ թաղապետ չէր: Ծմալը, Նեմեց Ռուբեն, Թոխմախի Մհերը, Բուռնաշը եւ այլք 2017-ին չմտան ԱԺ:

Չնայած նրանց առկայութիւնը նախկինում պայմանաւորուած էր պատերազմի մէջ գտնուող

պետութեան իշխանութեանը բրուտալ տեսք ապահովելու անհրաժեշտութեամբ: Հասարակութիւնը մինչեւ յեղափոխութիւնը, կարելի է ասել, ամբողջութեամբ դեմիլիտարիզացուած էր, եւ պետականութեան այդ մոտեւր պահպանում էր միմիայն իշխանութեան ամբողջութեամբ, իսկ երբ այդ կերպարներէն ազատուեցին, իշխանական բուրգը սկսեց ցնցուել: Մինչեւ հիմա հանրապետականների կարկառուն դէմքերը՝ Շարմազանովը, Աշոտեանը, Արփինէ Յովհաննիսեանը, լացակուծ զբաղումներ են անում սոցցանցերում՝ նկարագրելով իրենց տառապանքները յեղափոխութեան օրերին: Ռազմականացուած երկրի իշխանութիւնը, պարզում է, ամենածանր բանը համարում է իրենց տների մօտ դատարկ դազադներ դնելն ու սեւ լենտեր կապելը: Իսկ հարց է առաջանում՝ որտե՞ղ էին նրանք, որոնց դռները մօտ հնարաւոր չէր դատարկ դազադ տանել, որովհետեւ դազադի առաքիչը հենց ինքը կարող էր դրա մէջ յայտնուել՝ սեւ լենտով փաթեթաւորուած:

Ինչպէ՞ս էր ստացուել, որ Ծմալի փոխարէն ԱԺ-ում նստած էին սեւ լենտերից եւ դատարկ դազադներից վախեցողները, ու հենց նրանք պարտուեցին Փաշինեանին կամ, իրենց ասած, սորոսականներին: Եւ առհասարակ, իշխանութիւնն ինչպէ՞ս է պատրաստուում լուծել երկրի առջեւ ծառայած խնդիրները, ո՞ր եղանակով, ովքե՞ր են դա անելու, ի՞նչ աշխարհընկալումներով ենք շարժուելու այսուհետ, ի՞նչ մօտեցումներով: Արդեօք շարունակելու ենք արհա-

մարհել քաղաքակիրթ աշխարհի կանոնները, այդ դէպքում ի՞նչ իրաւական պետութեան մասին կարող է խօսք լինել, եթէ նորից գնալու ենք հին ճանապարհով: Արդեօք պետականութիւնն ենք ամրապնդելու, թէ՞ նորից կուրօրէն գնալու ենք ազգային զազափարախօսութեան հետեւից, այդ դէպքում ի՞նչ ժողովրդավարութիւն, եւ ի՞նչ ժողովրդավարական ինստիտուտների մասին կարող է խօսք լինել:

Նորից միլիտարիզացիա, թէ՞ դեմիլիտարիզացիա, իրաւունք, թէ՞ ուժ, պատերազմ, թէ՞ խաղաղութիւն, եթէ պատերազմ, ապա ի՞նչ ռեսուրսներով, եթէ խաղաղութիւն, ապա ի՞նչ պայմաններով, եւ, որ ամենակարեւորն է՝ ովքե՞ր են իրականացնողները, կոնկրետ մարդիկ, որովհետեւ ամէն մի տարբերակ պէտք է ունենայ հենց դրա իրականացման համար համապատասխան ֆիզուրներ: Չի կարելի գտնուել պատերազմական վիճակում եւ ամէն օր հրապարակային ելոյթներ ունենալ՝ քննադատելով ազգային հերոսներին կամ գեներալներին, չի կարելի ազատամարտիկներին նսեմացնող հրապարակումներ անել, անգամ եթէ նրանք որեւէ անընդունելի քայլ են անում:

Ցանկանում ենք, թէ ոչ՝ պէտք է հանդուրժենք արտօնեալ, օդիոզ կերպարներին, եթէ գնում ենք այդ ճանապարհով, իսկ եթէ միւս՝ քաղաքակիրթ ճանապարհով ենք շարժուելու, ուրեմն պէտք է մեղմենք մեր ազգային ախորժակը եւ

Շար.ը էջ 14

Մեր Թշնամիները Եւ Բարեկամները

ՌՈՒԲԵՆ ՄԵՐՈՒԲԵԱՆ

44-օրեայ պատերազմի յայտնի արդիւնքները, բնականաբար, վերաարդիականացրեցին «ովքե՞ր են ի վերջոյ մեր թշնամիները եւ բարեկամները, եւ ի՞նչ անել նրանց հետ» հարցը, եւ այդ հարցի պատասխանների տարբերակները բազմաթիւ են եւ խաչաբեղէն, համեմուտք դաւադրապաշտութեան, ինչպէս նաեւ՝ միանգամայն հասկանալի յոյսերի՝ մեծ կամ փոքր չափաբաժնով: Սակայն, իրականում, այդ հարցին առանց աւելորդ յուզականութեան եւ ճշգրտօրէն հիմնաւորուած պատասխանից կախուած է մեր պետականութեան յետագայ ընթացքի հետ ուղղակիօրէն կապուած շատ բան:

Աւտորիտար բռնապետութիւնները, որոնք այլեւս յայտարարուած են որպէս ԱՄՆ ազգային անվտանգութեան սպառնալիք՝ այլապէս եւ ձեւախեղում են ոչ միայն ներքաղաքական պրակտիկաները, վերածուելով սեփական ժողովուրդների գլխին մի մեծ շարիքի, այլեւ, արի ու տես, արտաքին քաղաքականութիւնն են ձեւախեղելով ծառայեցնում սեփական շարունակական վերարտադրութեան շահերին: Եւ կախուած սեփական երկրի պատմական ուղով պայմանաւորուած «չեղումները» (զարգացման թիրախներ, զարգացման թիրախներ, յաղթանակ կամ պարտութիւն անցնալի պատերազմներում, կամ ուղղակի ասելով, որ այսինչները կամ այնինչ-

ները «մեզ չեն սիրում»)՝ յաճախ կառուցում են այնպիսի արտաքին քաղաքականութիւն, որն, ըստ էութեան, որեւէ կապ չունի տուեալ երկրի իրական շահերի հետ: Եւ արդիւնքում ստանում ենք թէ՛ ազրեսիա, թէ՛ նէոկոլոնիալիզմ ղոկտրիններ, թէ՛ սեփական անձեռնամխելիութեան դիմաց երկիրն այլոց «տանիքի» տակ տեղաւորելու դեգեներատիւ ձգտում:

Դեհ, իսկ ինչ վերաբերում է յատկապէս փոքր երկրներին, որոնք լուծած չլինելով սեփական անվտանգութեան հիմնախնդիրը, նաեւ դժբախտութիւն են ունենում ընկալուել մի նման երկրի «բարեկամը», իսկ միւսի՝ «թշնամին», յաճախ տարբեր պատճառներով զրկւում են սեփական ընտրութեան հնարաւորութիւնից: Եւ եթէ թշնամիների պարագան կարող է շատ քիչ կախուած լինել սեփական ցանկութիւններից, ապա բարեկամների հարցը լուծւում է բացառապէս զիտակցուած ընտրութեան միջոցով, եւ միայն աւտորիտարիզմով եւ ժողովրդավարութեամբ չէ, որ այս ամէնը պայմանաւորուած է:

Գոնէ Հայաստանի պարագայում 2020-ից յետոյ մի քանի հարցեր դարձել են խիստ օրինաչափական եւ տրամաբանական, եւ դրանց մասին սկսել են խոսել հրապարակայնօրէն, այդ թւում՝ Հայաստանի վարչապետը, յայտնաւորապէս, նշելով, որ, այո՛, «Ռուսաստանը մեր բարեկամն է, բայց Ատրպեյճանը եւ Թուրքիան նրա

թշնամիները չեն»: Նիկոլ Փաշինեանը փաստն է արձանագրում, սակայն դա ոչ ամբողջական ճշմարտութիւնն է: Իսկ ճշմարտութիւնն ամբողջանում է, երբ դրան յաւելում ենք, որ Ռուսաստանի համար անհամեմատելիօրէն աւելի արժէքաւոր են յարաբերութիւնները Պաքուի եւ Անքարայի հետ, քան Երեւանի: Աւելին, Երեւանի հետ յարաբերութիւնների արժէքն ամենաբարձր է առաջին երկուսի հետ յարաբերութիւնների արժէքից եւ այն ունի, մեղմ ասած, սոսկ «օպերատիւ» նշանակութիւն: Մեղմ ասենք, որպէսզի չասենք՝ ուղղակի զրպանի մանրադրամ, որը պատրաստ է լինելու ցանկացած պահի բոլոր «լցնել սեղանին»՝ ցանկացած ձեռնտու, թէկուզեւ անպարկեշտ առաջարկութեան դիմաց:

Աստուած իրենց հետ, վերջին բանը, որն արժէ անել՝ դա նեղանալն է ռուսներից կամ, առաւելեւ, նրանց մեղադրել «դաւաճանութեան» մէջ: Եւ ոչ էլ մենք ենք «դաւաճանում», երբ սկսում ենք բարձրաձայնել հասունացած հարցերը եւ գալ եզրակացութիւնների: Ի վերջոյ, փաստի արձանագրումը մեղադրանք կամ մոլանաթ չէ: Եւ ուրեմն, մեր թշնամիները, նրանք, ովքեր մե՛զ են թշնամի համարում՝ ռուսների թշնամիները չեն, եւ ժամանակն է սա հասկանալ:

Սակայն, արդեօք մեր թշնամիներն են նրանք, ում Ռուսաստանը մեր բարեկամն է, բայց Ատրպեյճանը եւ Թուրքիան նրա

Շար.ը էջ 14



ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԱՍԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՂԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Նորանոր Աղետները Խուսափելու Միակ Միջոցը Այս Պահուն Երեք Նախկին Նախագահներու Դաշինքը Կ'ըլլար. Տեր Պետրոսեան

«Ինչ ուզում են ասեն, փաշինեանական յանցաւոր եւ ազգակործան վարչախմբի վերարտադրման վտանգի կանխման եւ նորանոր աղէտներից խուսափելու միակ միջոցն այս պահին էլ հանրապետութեան երեք նախկին նախագահների դաշինքը կը լինէր», - iLur.am-ի մէջ հրատարակած յոդուածով յայտարարած է Հայաստանի առաջին նախագահ՝ Լեւոն Տէր Պետրոսեան:



ԳՅ առաջին նախագահ՝ Լեւոն Տէր Պետրոսեան

«Այլապէս մեզ սպառնում են վարչական, ֆինանսական, քրէական միջոցների համատարած օգտագործմամբ ուղեկցուող կատաղի ընտրութիւններ, որոնց արդիւնքը Հայաստանի եւ Արցախի համար կարող է աւելի աղէտաբեր լինել, քան վերջին պատերազմում կրած նուաստացուցիչ պարտութիւնը», - նաեւ ընդգծած է Տէր Պետրոսեան:

Նին առաջարկած էր ընդունել իր կողմէ կազմուած յայտարարութիւն մը: Ռուպերթ Քոչարեան անմիջապէս մերժած է այդ առաջարկը:

Յիշեցնենք, որ Մայիս 5-ին iLur.am-ի մէջ հրատարակած յոդուածով առաջին նախագահը կը տեղեկացնէր, որ Մարտ 25-ին Հայաստանի եւ Արցախի նախկին նախագահներուն հետ հանդիպման ընթացքին, որ կայացած էր իր նախաձեռնութեամբ, ինքը Ռուպերթ Քոչարեանին ու Սերժ Սարգսեանին

Հայաստանի առաջին նախագահը կը տեղեկացնէ, որ Ռուպերթ Քոչարեանի կողմէ իր առաջարկի կտրուկ մերժումէն յետոյ Մայիս 1-ին հանդիպած է երրորդ նախագահ՝ Սերժ Սարգսեանի հետ եւ անոր առաջարկած ընտրութիւններուն մասնակցիլ ՀԱԿ-ՀՀԿ դաշինքով:

Փաշինեան. Տեր Պետրոսեան Որոշած Է Ընել Աւագակապետական Յեղափոխութիւն

Աժ-կառավարութիւն հարց ու պատասխանի ժամանակ վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան անդրադարձաւ Լեւոն Տէր Պետրոսեանի առաջարկին՝ ուղղուած Սերժ Սարգսեանին ու Ռուպերթ Քոչարեանին:

Ան նշեց, որ մարդիկ կային, որ 1997-98 թուականներէն ի վեր կը պնդէին, որ այս քաղաքական գործընթացները թատրոն եւ խաղ են: «Եւ հիմա, ենթադրում եմ, էս խօսակցութիւններն աւելի կ'աշխուժանան, եւ այդպէս պնդող մարդիկ կ'ասեն, նաեւ իմ երեսով կուտան՝ տեսա՞ք, բա որ այն ժամանակ ասում էինք՝ էս ամէն ինչը թատրոն է, ի զուր գնացիք էդ ամէնի մէջ մտաք: Փաստօրէն քաղաքական գործունէութեան ընթացքում միակ բանը, որը Լեւոն Տէր Պետրոսեանին մեծ ճշգրտութեամբ յաջողուել է նախկինում, Ռուպերթ Քոչարեանին եւ Սերժ Սարգսեանին իշխանութեան բերելն է եւ իշխանութեան պահելն է, որը ոմանց ջանքերով խափանուել է: Փաստօրէն 2008 թուականի Մարտի մէկը սկզբունքային տարածաշրջան է, եւ կարող եմ յաջողութիւն մարտի մեր ժողովրդին եւ վստահութիւն յայտնել ձեզ բոլորիդ, որ աւագակապետական յեղափոխութիւնը չի ստացուել», - ըսաւ Փաշինեան:

«Լեւոն Տէր-Պետրոսեանն իր ընդդիմադիր քաղաքական գործունէութեան ընթացքում երկու անգամ փորձել է անել, պատկերաւոր ասած, իշխանափոխութիւն կամ յեղափոխութիւն: Մէկը եղել է 2008 թուականի ժողովրդավարական յեղափոխութիւնը, որը չի ստացուել մեզ յայտնի կամ անյայտ պատճառներով, երկրորդը եղել է պուրժուական դեմոկրատական յեղափոխութիւնը, որի ճակատագիրը բոլորս գիտենք: Թերեւս պարոն Տէր-Պետրոսեանը որոշել է կրկին փորձել եւ այս անգամ անել աւագակապետական յեղափոխութիւն: Մի երկու արտայայտութիւն էլ կայ, բայց իմ կարգավիճակի բերումով հիմա չեմ օգտագործում», - ըսաւ Փաշինեան:

Քոչարեան Կը Գլխաւորէ «Հայաստան» Դաշինքը

Ռուպերթ Քոչարեանի գլխաւորած դաշինքը կը կոչուի «Հայաստան»: Այս մասին ՀՀ երկրորդ նախագահի, ՀՅԴ-ի ու «Վերածնունդ Հայաստան» կուսակցութեան քաղաքական համագործակցութեան մեկնարկի հանդիսաւոր միջոցաւման ժամանակ յայտնեց Ռուպերթ Քոչարեան: Անոնք համագործակցութեան փաստաթուղթ ստորագրած են, որով կ'ամրագրուի, որ այդ ուժերը ընտրութիւններուն պիտի մասնակցին դաշինքով:

ՔՊ-ն Ընտրութիւններուն Պիտի Մասնակցի «Ապագայ Կայ» Կարգախօսով

Նիկոլ Փաշինեանի գլխաւորած «Քաղաքացիական Պայմանագիր» (ՔՊ) կուսակցութիւնը արտահերթ ընտրութիւններուն պիտի մասնակցի ոչ թէ դաշինքով, այլ որպէս առանձին կուսակցութիւն:

«Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը դաշինքով չի մասնակցելու ընտրութիւններին, այլ մասնակցելու է որպէս առանձին կուսակցութիւն», - ըսաւ «Իմ Քայլը» խմբակցութեան ղեկավար Լիլիթ Մակունց: Կուսակցութեան կարգախօսը կը դառնայ՝ «Ապագայ Կայ»:

Արման Բաբաջանեան Ցոյց Տուաւ Թուղթ՝ Ռուպերթ Քոչարեանի Ընտանիքի Ունեցուածքի Վերաբերեալ



Պատգամաւոր՝ Արման Բաբաջանեան ելոյթի ընթացքին

«Շատ ծանր օր էր նախօրէն. Մարտի մէկը, Հոկտեմբերի 27-ը ձեռք ձեռքի խուժեցին Ազատութեան հրատարակ», - Աժ-ի յատուկ նիստին ըսաւ պատգամաւոր՝ Արման Բաբաջանեան:

Կահարութեամբ, այդ հրատարակից ազդարարում է իր վերադարձը: Անձը, ով հիմա պէտք է չոքեչոք ազատութիւն աղերսեր, յայտնուել է Ազատութեան հրատարակում: Մեր երկիրը զաւթեցին դրսից, հիմա փորձում են զաւթել նաեւ ներսից: Մեր ժողովուրդը ձեզ այսպիսի մանտաթ չէր տուել, յարգելի իշխանութիւն, իրաւունք չէր տուել մեր վզին փաթաթել այսպիսի յանցագործներին: Ձեր իշխանութիւնն է պատասխանատու Ազատութեան հրատարակը պղծելու համար: Գալ իշխանութեան քորուփցիայի դէմ պայքարի, արդարութիւն հաստատելու յանձնառութեամբ ու տապալել այդ գործընթացը այնպէս, որ բոլոր քորուփցիոններն ու մարդասպանները դարձել են ընդդիմադիր քաղաքական գործիչներ ու ցանկանում են վրէժի միջոցով հասնել իշխանութեան», - աւելցուց պատգամաւորը:

Արման Բաբաջանեան աւելցուց, որ իր ձեռքի տակ կայ քանի մը էջ կազմուած թուղթ՝ Ռուպերթ Քոչարեանի ընտանիքի ունեցուածքի վերաբերեալ: Ան այդ փաստաթուղթը ցուցադրեց Աժ-ի ամպիոնին: «Եւ հարց եմ տալիս իշխանութեանը՝ էս ամբողջ ունեցուածքից, հազարաւոր ունեցուածքից ի՞նչ էք կարողացել այս երեք տարիների ընթացքում ետ բերել պետութիւնից եւ ժողովրդի գողացածներին: Այս ամէնը հնարաւոր դարձաւ ձեր իշխանութեան անկարողութեան պատճառով: Նա, ով ժողովրդի ջարդն սկսել էր Ազատութեան հրատարակից, ապա Երեւանի կեղրոնում շարունակել գնդա-

«Եթէ Նախկին Իշխանութիւնները Շատ Աշխուժանան, Այդ Աջակցութիւն Կ'ըլլայ Նիկոլ Փաշինեանին», Կը Յայտնէ Էտմոն Մարուքեան

Խորհրդարանական ընդդիմադիր՝ «Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան ղեկավար՝ Էտմոն Մարուքեան կը վերահաստատէ՝ եթէ նախկին իշխանութիւնները շատ աշխուժանան, այդ աջակցութիւն կ'ըլլայ Նիկոլ Փաշինեանին: Մայիս 10-ին Ազգային ժողովին ներս, ճեպագրուցներու ժամանակ, Մարուքեան պնդեց, եթէ նախկին իշխանութիւնները օրակարգ ունին երկրին մէջ իշխանափոխութեան, ուրեմն պէտք է դուրս գան գործընթացէն:



«Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան ղեկավար՝ Էտմոն Մարուքեան

«Այն, ինչ ասել եմ ուժի մէջ է, եթէ նախկին իշխանութիւններն օրակարգ ունեն երկրում իշխանափոխութեան, ուրեմն պէտք է իրենք դուրս գան գործընթացից: Յեղափոխութիւնը նոր է եղել երկրում, երեք տարի երկար ժամանակ չէ, եւ ժողովուրդը, տեսնելով նրանց աշխոյժ մասնակցութիւնը, որը նաեւ ինչ որ ձեւի ուժեղացում է, դա նաեւ իշխանութիւնն է անում, որովհետեւ իշխանութեանը ձեռնտու է, որ ասի՝ «այ, նրանք գալիս են, եկէք մեզ ընտրէք» եւ ես ասել եմ, որ եթէ իրենք շատ աշխուժանան, նման ձեւով սրեն, էդ իմաստով, այո՛, աջակցութիւն է Նիկոլ Փաշինեանին», - ըսաւ Մարուքեան:

նր՝ շարունակելով. - «Հիմա սա մի փուլ է, որ մենք եկել ենք ասում են՝ ժողովուրդ, էս տեսել էք՝ ինչ են արել, էս էլ տեսաք՝ ինչ արեցին, դուք ունէք այլընտրանք, կայ այլընտրանք, քուէարկի՛ր՝ «Լուսաւոր Հայաստան»:

«Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան ղեկավար Լիլիթ Մակունց: Կուսակցութեան կարգախօսը կը դառնայ՝ «Ապագայ Կայ»:

ԼՈՒՐԵՐ

Հայոց Բանակը Այս Պատերազմին Կռուած Է Մինչեւ Ամենավերջին Վայրկեանը, Շեշտեց Վարչապետ Փաշինեան



Փաշինեան ելոյթ կ'ունենայ Գեղարքունիքի մարզի զորամասերէն մէկը այցի ընթացքին

Մայիս 9-ի եռատօնի առիթով վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան այցելեց Գեղարքունիքի մարզի զորամասերէն մէկը, ուր ան յայտարարեց. «Այսօր եռատօնը նշում ենք դառնութեամբ, խառը զգացումներով, կսկիծով, ինչ որ տեղ պարտութեան դառնութիւնը սրտում պահած: Բայց վկայ է Աստուած, որ մենք այս ընթացքում բացարձակապէս ոչինչ, որեւէ բան չենք խնայել Շուշիի ազատագրման հերոսների ու նահատակների գործն ու փառքը պաշտպանելու համար», - կառավարութեան հաղորդմամբ ըսած է Փաշինեան՝ աւելցնելով, որ պէտք է վերլուծել եւ հասկնալ, թէ ինչը այնպէս չէ կատարուած, ուր սխալած ենք, «որտեղ բաւարար սկզբունքայնութիւն չենք ցուցաբերել»:

«Բայց վկայ է Աստուած, որ մենք, հայոց բանակն այս պատերազմում կռուել է մինչեւ ամենավերջին վայրկեանը, երբ կռիւն ունէր հեռանկար:

Բայց նաեւ կարելոր է, որ այդ կռուի մէջ չենք կորցրել խելամտութիւնը: Կարելոր է, որ կարողացել ենք, այդ, կայացնել ծանր որոշումներ, այդ թուով՝ յանուն մեր բանակի, մեր զորավարների եւ սպանների, մեր զինուորների եւ յանուն նրանց ընտանիքների ու զաւակների:

Եւ մենք իրաւունք չունենք թոյլ տալ, որ մեր նահատակների

արիւնն ի գուր հեղուած լինի: Մեր Հայրենիքը, նրա շէնութիւնը, նրա զարգացումը, նրա հպարտութիւնը մեր ամենամեծ յարգանքը պիտի լինի մեր նահատակներին: Եւ այդ հպարտութեան առաջին գծում կանգնած է Հայոց հերոսական բանակը:

Խոնարհուելով մեր նահատակների առաջ, շնորհաւորում եմ բոլորիս Հայրենական մեծ պատերազմում տարած յաղթանակի առիթով: Շնորհաւորում եմ եռատօնի առիթով: Շնորհաւորում եմ բոլորիս այն ապագայի առիթով, որ մենք իրար հետ պիտի կառուցենք: Եւ որեւէ մէկը սրանում թող չկասկածի», - ըսած է Փաշինեան:

Վարչապետի պաշտօնակատարը հայրենիքին մատուցած ծառայութիւններու համար, ինչպէս նաեւ Մայիս 9-ի եռատօնի կապակցութեամբ Զինուած Ուժերու երկրորդ բանակային ջոկատի զորամասերէն շարք մը զինծառայողներուն յանձնած է պետական տարբեր պարգևներ՝ «Մարտական խաչ» առաջին աստիճանի, «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի եւ «Սուրբ Վարդան Մամիկոնեան» շքանշանով:

Այնուհետեւ Նիկոլ Փաշինեան խորհրդակցութիւն կատարած է 2-րդ բանակային ջոկատի հրամանատարներուն հետ, քննարկած Զինուած ուժերէն ներս կատարուող բարեփոխումներու ընթացքն ու պատասխանած անոնց հարցերուն:

Լաթվիան ճանչցած է եւ Դատապարտած՝ Հայոց Ցեղասպանութիւնը

Շարունակուած էջ 1-էն

Առաքելական եկեղեցու ներգրաւուածութիւնը (որը եղել է ամենաերկարատեւը եւ հետեւողականը): Այս ամէնի ամբողջութիւնը, գումարած վերջին տարիներին մեր աշխատանքներում որոշ շեշտադրումները փոփոխութիւնները յանգեցրեցին այս արդիւնքին», - գրած է դեսպանը:

Ան յիշեցուց, որ դեռեւս 2020 թուականի Ապրիլ 24-ին Լաթվիոյ խորհրդարանի երկու ուժեր, որոնք նաեւ իշխող դաշինքի անդամներ են՝ «Նոր պահանջողականներ» եւ «Զարգացմանը՝ Այո» կուսակցութիւնները արդէն կատարած էին Հայոց ցեղասպանութիւնը ընդունող եւ դատապարտող յայտարար-

ութիւններ: «Այս ուժերի, ինչպէս նաեւ «Համաձայնութիւն» կուսակցութեան ներկայացուցիչների մեծ մասի նախաձեռնութեամբ էլ 2021 թ. Փետրուարից սկսուեց Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործընթացը, որի արդիւնքում բանաձեւ-յայտարարութիւն ներկայացուեց Ապրիլ 23-ին: Ապրիլ 29-ին նախնական բանաձեւի տարբերակը առարկութիւններով յետաձգուեց մէկ շաբաթով:

«Խոնարհուած եմ Լաթվիայի խորհրդարանի բոլոր քաղաքական ուժերի եւ պատգամաւորների առջեւ, ովքեր քուէարկել են հայ ժողովրդի համար կարեւորագոյն այս հարցին Լաթվիայում հանգուցալուծում տալու օգտին», - գրած է դիւանագէտը:

Դատաւորը Մերժեց Յետաձգել Քոչարեանի Կաշառք Ստանալու Գործով Դատավարութիւնը

Երեք միլիոն տոլար կաշառք ստանալու համար մեղադրուող Ռոպերթ Քոչարեանի փաստաբանները միջնորդեցին, որ Մայիս 11-ին նշանակուած դատական նիստը յետաձգուի՝ պատճառաբանելով առաջիկայ խորհրդարանական ընտրութիւնները:

Ամբաստանեալի կարգավիճակ ունեցող պաշտօնաթող նախագահի պաշտպանը դատարանէն խնդրեց նիստը յետաձգել մինչեւ արտահերթ ընտրութիւններու աւարտը՝ պատճառաբանելով, որ իր պաշտպանեալը պիտի մասնակցի ընտրութիւններուն, իսկ այս ընթացքին կատարուող դատական նիստերը կը խոչընդոտեն քարոզարշաւը: Արամ Վարդեանեան վկայակոչեց ընտրապայքարին մասնակիցներու հաւասար հնարաւորութիւններու մասին միջազգային փաստաթուղթերը եւ աւելցուց, որ անհրաժեշտութեան պարագային դատարանին կը ներկայացնեն դաշինքի ձեւաւորման, նաեւ դաշինքին Քոչարեանի մասնակցութեան վերաբերեալ փաստաթուղթերը:

Մեղադրող դատախազ՝ Պետրոս Պետրոսեանը, սակայն, առարկեց՝ եւ շեշտեց, որ արդարադատութեան շահը չի կարող պայմանաւորուիլ որեւէ գործընթացով. «Մարդիկ ընտրելու եւ ընտրուելու սահմանադրական իրաւունք ունեն: Այդ անձինք կարող են լինել ե՛ւ կալանաւորուած, ե՛ւ ձերբակալուած, ե՛ւ ազատութեան մէջ, եւ



Դատաւոր՝ Աննա Դանիբեկեան

դրանով պայմանաւորուած չի կարող գուճահեռ անցկացուել, որ բոլոր անձինք պէտք է հաւասար պայմաններ ունենան ազատ ընտրական գործընթացներին մասնակցելու համար»:

Դատաւոր՝ Աննա Դանիբեկեան մերժեց Քոչարեանի պաշտպաններու միջնորդութիւնը. «Դատարանն արձանագրում է, որ Արամ Վարդեանեանի կողմից չի ներկայացուել որեւէ հիմնաւոր պատճառաբանութիւն առ այն, որ դատական նիստն աւելի երկար ժամանակով յետաձգելու անհրաժեշտութիւն, մասնաւորապէս, որ Ռոպերթ Քոչարեանի՝ ընտրութիւններին մասնակցելը կը բացառի դատական նիստերի բնականոն ընթացքը»:

Ապրիլին Հայաստանի Հարկային Եկամուտները Կազմած Են 360 Միլիոն Տոլար

Ապրիլ ամսուայ հարկային եկամուտները, ներառեալ՝ դրոշմանիշային վճարումները, կազմած են շուրջ 180 միլիառ դրամ (360 միլիոն տոլար), ինչ որ մէկ ամսուայ ընթացքին հարկային եկամուտներու պատմական մրցանիշ է Հայաստանի համար: Այս մասին կառավարութեան նիստի ժամանակ յայտարարեց վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեան:

Ան նաեւ յիշեցուց, որ պիւտճէի եկամտային մասը առաջին եռամսեակին գերակատարուած է շուրջ 22 միլիառ դրամով: «Եւ ես յոյս ունեմ, որ այս ընթացքը մենք կը կարողանանք ոչ միայն պահպանել, այլեւ՝ աւելացնել», - նշեց Փաշինեան:

Յաջորդ շատ կարելոր ցուցանիշը, ըստ կառավարութեան ղեկավարին, այն է, որ «Ապրիլի դրութեամբ մենք, ձեռնարկատիրութեան հարկերի վերադարձման գծով, ունենք պարտքերի պատմական ամէնէն նուազը»: «Այսինքն՝ Ապրիլ ամսուայ արդիւնքներով պարտքը կազմած է 67.4 միլիառ դրամ, ընդ որում՝ մենք գերազանցել ենք մեր իսկ մրցանիշը: 2020 թուականի Օգոստոսին պարտքը

եղել է էլի պատմական ամէնէն նուազը՝ 69.4 միլիառ դրամ», - ընդգծեց վարչապետի պաշտօնակատարը:

Կառավարութեան ղեկավարը ներկայացուց մէկ այլ ցուցանիշ՝ 2021-ի Ապրիլին կատարուած գործարքները 8.8 միլիոն հատով կամ 24 տոկոսով աւելի են 2019-ի Ապրիլին: «Ուշադրութիւն դարձրէք՝ ոչ թէ 2020 թուականի հետ ենք համեմատում Ապրիլը, երբ արդէն լրջ-դառն (քաղաքի սահմանափակում) վիճակն էր, այլ 2019 թուականի հետ: Իսկ դրանով արձանագրուած շրջանառութեան ծաւալները 130 միլիառ դրամով կամ 26.6 տոկոսով աւելի են 2019 թուականից: Ի հարկէ, այստեղ էլ ծաւալի առումով որոշակի ազդեցութիւն գնաճը կ'ունենայ, բայց ուզում եմ ուշադրութիւն հրաւիրել, որ գործարքների թիւը 8.8 միլիոն հատով աւելի է, եւ սա բաւական լաւ եւ էական ցուցանիշ է», - շեշտեց վարչապետի պաշտօնակատարը:

«Կարծում եմ՝ այս ցուցանիշները վկայում են, որ մեր տնտեսական շարժունութիւնը վերականգնման փուլում է», - եզրակացուց Նիկոլ Փաշինեան:

ՄԱՍԻՍ
 ԱՄԵՆԱՎՍԵԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ
www.massisweekly.com

Արմեն Սարգսեանի Քաղաքացիութեան Առնչուող Տեղեկանքը 2018-ին Ներկայացուած է ԱԺ-ին

Վերջին 6 տարուայ ընթացքին, միայն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի հանդիսանալու վերաբերեալ լիազօր մարմնի կողմէ տրուած համապատասխան տեղեկանքը, ՀՀ օրէնսդրութեամբ սահմանուած կարգով, 2018-ին ներկայացուած է Ազգային ժողովին: Այս մասին «Ազատութիւն»-ի հարցման ի պատասխան տեղեկացուցած են Հայաստանի նախագահի աշխատակազմի հասարակայնութեան հետ կապերու վարչութեան:

Յիշեցնենք, որ գլխաւոր դատախազութիւնը, նախագահ՝ Արմեն Սարգսեանի քաղաքացիութեան առնչուող քրէական գործ յարուցած է: Յատուկ քննչական ծառայութիւնը պէտք է քննէ՝ արդեօք Հայաստանի նախագահը 2018-ի ընտրութեան ժամանակ ներկայացուցած է Մեծ Բրիտանիոյ քաղաքացի ըլլալ-չըլլալու մասին փաստաթուղթեր, կամ ոչ:

Վերջերս աւելի քան 50 փաստաբաններ այս հարցով դիմած էին Յատուկ քննչական ծառայութիւն, որ, սակայն, մերժած էր քրէական գործ յարուցել: Այժմ գլխաւոր դատախազութիւնը վերացուցած է Յատուկ քննչական ծառայութեան այս մերժումը եւ քրէական գործ յարուցած՝ փաստաթուղթեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու յօդուածով:

«Ազատութիւն»-ի հարցման ի պատասխան նաեւ նշած են, որ նախագահը եւ նախագահի աշխատակազմը բազմիցս անդրադարձած են այս թեմային, ուստի, հարցի վերաբերեալ լրացուցիչ մեկնաբանութեան կարիք չկայ:

Ուժի մէջ մտած է Քրէական օրէնագրքի եւ Վարչական իրաւախախտումներու վերաբերեալ օրէնագրքի մէջ փոփոխութիւններ նախատեսող օրինագիծը, գոր Ազգային ժողովը ընդունած էր Ապրիլ 28-ին:

Իշխանութիւնները նախընտրական քարոզչութիւնը խոչընդոտելու համար աւելի խիստ պատասխանատուութիւն սահմանած են: Օրինակ՝ տեղամասային կեղ-

րոնը կամ անոր յարակից տարածքը բռնութիւն գործադրելը կամ անոր սպառնալիքը, ինչպէս նաեւ նախընտրական քարոզչութիւն կատարելուն հարկադրելը կամ խոչընդոտելը, կը պատժուին մինչեւ երեք տարի ազատազրկմամբ, ընտրական քարոզչութիւնը կամ խոտարարելու արդէն ծանր յանցագործութիւն կը համարուի, որ նմանապէս կը պատժուի ազատազրկմամբ՝ 3-6 տարի ժամկէտով:

Հաստատուեցաւ Ընտրակաշառք Տալու Համար Պատիժները Խստացնող Օրինագիծը

Ուժի մէջ մտած է Քրէական օրէնագրքի եւ Վարչական իրաւախախտումներու վերաբերեալ օրէնագրքի մէջ փոփոխութիւններ նախատեսող օրինագիծը, գոր Ազգային ժողովը ընդունած էր Ապրիլ 28-ին:

Ուժի մէջ մտած է Քրէական օրէնագրքի եւ Վարչական իրաւախախտումներու վերաբերեալ օրէնագրքի մէջ փոփոխութիւններ նախատեսող օրինագիծը, գոր Ազգային ժողովը ընդունած էր Ապրիլ 28-ին:

«Արցախի Միջազգային ճանաչումը Եղած է Եւ Կը Մնայ Օրակարգին Վրայ» Արայիկ Յարութիւնեան

Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան այցելած է Մարտակերտի շրջանի Հաթերքի ենթաշրջան եւ Շահումեանի շրջանի Ակնաբերդ համայնք:

Նախագահի աշխատակազմի տեղեկացմամբ՝ Յարութիւնեան հանդիպած է տեղի բնակչութեան ու շրջաններու ղեկավարութեան հետ եւ քննարկած համայնքներուն մէջ առկայ խնդիրները, անոնց լուծման ուղիները եւ ենթաշրջանի զարգացման ուղղուած շարք մը ծրագիրներ:

Նախագահը նշած է, որ Գետաւանի, Զարդախաչի, Հաթերքի, Զաքիկում, Չափարի եւ Ակնաբերդի մէջ պիտի շարունակուին շինարարական աշխատանքները՝ ուղղուած պատերազմի հետեւանքով տեղահանուած ընտանիքներու համար նոր բնակելի տուններու կառուցման, հին բնակարաններու վերանորոգման եւ անհրաժեշտ ենթակառուցուածքներու ստեղծման ու վերակառուցման:

Անդրադառնալով անվտանգային միջավայրին՝ Արայիկ Յարութիւնեան անգամ մը եւս շեշտած է, որ Արցախը այդ ոլորտի խնդիրները կը փորձէ լուծել համադրելով Պաշտպանութեան բանակի, Հայաստանի Հանրապետութեան եւ ՌԴ խաղաղապահ զօրակազմի ջանքերը եւ կողմնակից է բոլոր խնդիրներու խաղաղ կարգաւորման:

«Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչումը եղել եւ մնում է օրակարգում», - նշած է նախագահ՝ Յարութիւնեան:

Facebook-ը Հեռացուցած է Ատրպէյճանի ՊՆ Հետ Կապուած Հաշիւներ Ու Էջեր

Facebook-ը հիմատետրը ջնջած է Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան հետ կապուած ընկերային ցանցերու էջեր: Այս մասին կը տեղեկանանք Դիմատետրի տարածած մամուլի հաղորդագրութենէն: Դիմատետրը հեռացուցած է 124 դիմատետրեան հաշիւ, 15 էջ, 6 խումբ եւ 30 ինսթակրամեան հաշիւ: Այդ էջերը հիմնականին թիրախ դարձուցած էին ատրպէյճանական ներքին լսարանը, նաեւ Հայաստանը: Դիմատետրը կապեր յայտնաբերած է այդ հաշիւներուն



Եւ Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան միջեւ:

Կեդրոնական Դրամատան Նախագահի Համաձայն Հայաստանի Տնտեսութիւնը Կանխատեսուածն Աւելի Մեծ Աճ Պիտի Ունենայ

Հայաստանի տնտեսութիւնը աւելի մեծ աճ պիտի ունենայ, քան կը կանխատեսուէր նախապէս, լրագրողներու հետ հանդիպման ընթացքին, կարծիք յայտնեց Կեդրոնական Դրամատան նախագահ՝ Մարթին Գալստեան:

Գալստեան, սակայն, հրաժարեցաւ թիւեր նշելէ՝ պատճառաբանելով, որ տարեկան ութը անգամ կը հանդիպին լրագրողներուն հետ, չորսը՝ կանխատեսումային է, եւ չորսը՝ դիտարկումներու համար, եւ այսօրուայ հանդիպումը վերջիններէն է:

«Ուստի ես տնտեսական աճի վերաբերեալ կանխատեսում չեմ անի, սակայն ինչպէս նշեցի մեր մամուլի հաղորդագրութեան մէջ, մի բան ակնյայտ է մեզ համար, մեր նախորդ կանխատեսումների համեմատ տնտեսութիւնը աւելի դրական զարգացման միտումներ է ցուցաբերում», - ըսաւ Գալստեան:

Անցեալ տարուայ շոշափելի՝ 7.6 տոկոս անկումէն յետոյ, այս տարուայ պետական պիւտճէին համաձայն, կ'ակնկալուի, որ Հայաստանեան տնտեսութիւնը 2021-ին կ'աճի 4.8 տոկոսով: Կեդրոնական դրամատանը աւելի համեատ թիւեր կը նշէ: Այս Փետրուարին լրագրողներու հետ հանդիպման ընթացքին դրամատան նախագահ՝ Մարթին Գալստեան յայտարարեց սպասուող տարեկան մօտ 2 տոկոս տնտեսական աճի մասին, բայց արդէն չափորդ ամիս՝ դարձեալ լրագրողներու հետ հանդիպումին նկատարուած է, որ Ատրպէյճանը կը պատրաստուի դատել:



Հայաստանի Կեդրոնական Դրամատան Նախագահ՝ Մարթին Գալստեան

տելիօրէն իջեցուց թիւը, թէ 2021-ին Հայաստանի տնտեսութիւնը կը փակէ 1.4 տոկոսով:

Այս Մարտ ամսուն, Հայաստանի մէջ, ի վերջոյ, տնտեսական աճ արձանագրուեցաւ: Մէկ տարի շարունակ տեղի ունեցած անկումէն յետոյ, տնտեսական շարժունականութեան ցուցանիշը Մարտին աճեցաւ 3.8 տոկոս՝ նախորդ տարուայ Մարտին համեմատ, թէեւ մինչ պաշտօնական թիւերու ի յայտ գալը՝ մօտ երկու շաբաթ առաջ Տնտեսութեան նախարար՝ Վահան Քերոբեան պնդեց, թէ Մարտին պիտի ունենանք մինչեւ 7.5 տոկոս աճ. «Իմ հաշուարկով 7-7.5 տոկոսի կարգի է լինելու՝ նախորդ Մարտի համեմատ»:

Լաւրով Պաքուի Մէջ Ընդգծած է

Շարունակուած է 1-էն

նապէս կարգաւորուած է: «Նման միակերպ, ինչպէս Լեռնային Ղարաբաղ Ատրպէյճանի մէջ, այսօր չկայ, իսկ Նոյեմբեր 10-ի յայտարարութիւնը միայն յայտարարութիւն չէր, այլ Հայաստանի անձնատրութեան աթիւ», - նշած է Ալիեւ:

Պայրամովն այլ այսօր մամուլի ասուլիսի ընթացքին յայտարարած է. «Մենք կը համարենք, որ այսօր եզակի իրավիճակ է, Ատրպէյճանը վերականգնած է իր տարածքային ամբողջականութիւնը, վերականգնած է իր սահմանի աւելի քան 398 քիլոմէթրը: Պաքուն այսօր պատրաստ է վերականգնել յարաբերութիւնները Հայաստանի հետ»:

Լաւրով, ոչ Ալիեւի եւ ոչ ալ Պայրամովնի հետ հանդիպումին ու համատեղ մամուլի ասուլիսին ԵԱՀԿ Մինսքի խումբի շրջանակներէն ներս Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան վերջնական քաղաքական կարգաւորման մասին չէ խօսած, բայց, օրինակ, ակնարկած է, որ պէտք է կարգաւորել յետպատերազմեան բոլոր մարդասիրական հարցերը, անոնց կարգին՝ ռազմագերիներու վերադարձը:

Թէ՛ Ալիեւի եւ թէ՛ Պայրամովնի հետ հանդիպման ժամանակ Լաւրով օգտագործած է «ռազմագերիներ» բառը, իսկ Պայրամովն

այսօր ըսած է, որ Ատրպէյճան լաւ պայմաններու մէջ անազատութեան մէջ պահուող հայերը յանցագործներ են, գորս Ատրպէյճանը կը պատրաստուի դատել:

Մարդասիրական խնդիրներու լուծման անհրաժեշտութեան համաթեքսթով՝ Լաւրովի Պաքուի մէջ կայացած հանդիպումներու ծիրէն ներս յիշատակուած է նաեւ Հայաստանի կողմէ ականապատուած տարածքներու քարտէզներու տրամադրման հարցը:

Սերկէյ Լաւրովի այցի ծիրէն ներս կայացած բանակցութիւններու հիմնական հարցը փոխադրային ուղիներու արցն էր, որոնց շուրջ, ինչպէս յայտնի է յայտարարութիւններէն, Պաքուն ու Մոսկուան համաձայնութեան չեն եկած:

Յիշեցնենք, որ Իլհամ Ալիեւ երէկ յայտարարած էր, թէ երկաթուղիներու կառուցման հարցը նախ եւ առաջ քննարկած է ռուսական կողմի հետ, քանի որ հայկական երկաթուղիները կը պատկանին Ռուսաստանին: Ատրպէյճանի նախագահը յայտարարած էր, որ դարբաղեան խնդիրը թէ՛ ռազմի դաշտի, թէ՛ դիւանագիտական հարթակին վրայ կարգաւորուած է միայնակ: Իսկ Լաւրովը ընդունած ատեն ընդգծած էր, թէ ռուս խաղաղապահները կը գտնուին Ատրպէյճանի տարածք, եւ Պաքուն կ'ակնկալէ Ռուսաստանի աջակցութիւնը:

Բուռն Բախումներ Երուսաղեմի Ալ Աքսա Մզկիթի Ուխտագնացութեան Առթիւ



Իսլամական Ռամատան տոնին առթիւ Երուսաղեմի Ալ Աքսա մզկիթը վերածուած էր ուխտագնացութեան վայրի: Հազարաւոր մահմեդականներ իսրայէլէն, Պաղեստինի գրաւեալ մասէն եւ Յորդանանէն եկած էին անցեալ շաբաթավերջին: Արդարեւ Ալ Աքսա մզկիթն ու համալիրը իսլամական աշխարհի բոլոր կարեւորագոյն սրբատեղիները կը նկատուէին: Ուստի իրենց համար ռամատան ամիսն ալ սուրբ ամիս նկատուելով երեկոները պաշտամունքի կ'երթան հոն: Անցեալ Ուրբաթ երեկոյեան աղօթքի կիզակէտն ըլլալով, Ալ Աքսայի շուրջ համախմբուած ամբոխը կը գնահատուէր 90,000 հոգիի: Հին Երուսաղեմի «Դամասկոսի Դրան» առջեւ տեղի ունեցաւ առաջին մեծ բախումը, քաղաքի ոստիկանութեան եւ ցուցարարներու միջեւ: Անոնք արդէ իր ֆանդիսացած էին ուխտաւորներ փոխադրող հանրակառքերու քաղաք մուտքի իբրեւ թէ ապահովութեան նպատակով ստուգումներ կատարելուն: Ստեղծուած խառնաշփոթ վիճակի պատճառով տեղի ունեան բախումներ, որոնց հետեւանքով վիրաւորուեցան մօտ 200 պաղեստինցիներ եւ 17 իսրայէլի ոստիկաններ:

Նշենք նաեւ որ շրջանի անդորրութիւնն ու խաղաղութիւնը վտանգուած էր երեք շաբաթ առաջ երբ ոստիկանութիւնը անտեղի կերպով, արգելիքներ դրաւ ուխտաւորներ փոխադրող հանրակառքերուն առջեւ: Լարուածութիւնը սաստկացաւ նաեւ արեւելեան Երուսաղեմի Շէյխ Ժարրահ թաղամասին մէջ, կարգ մը շէյքերու բռնազրաման եւ պաղեստինցի ընտանիքներու վտարման հաւանականութեան պատճառով:

Այս առթիւ Եգոպտոսի եւ Յորդանանի արտաքին գործոց նախարարութիւնները՝ դատապարտեցին իսրայէլի իշխանութիւններուն կողմէ եղած բռնարարները խաղաղ հաւատացեալներու վրայ:

Մինչ այդ, իսրայէլեան գերագոյն դատարանը յետաձգեց Շէյխ Ժարրահ թաղամասի պաղեստինցի ընտանիքներու տունները դատարկելու վերջնական վճիռի գործադրութիւնը:

Պաղեստինի Ընտրութիւնները Չեղեալ

Մահացու բռնարարներու եւ բախումներու պատճառով, պաղեստինեան պետութիւնը չեղեալ նկատեց շրջանին մէջ կայանալիք ընտրութիւնները: Արդարեւ վերջերս տեղի ունեցած շարունակական ընդհարումներու պատճառով, երկու պաղեստինցի զինեալներ եւ երիտասարդ իսրայէլացի մը մահացաւ արեւմտեան ափի տարբեր պատահարներու ընթացքին: Կ'ըսուի թէ իսրայէլի Խորհրդարանական ընտրութեանց հետ առնցող հրեայ ազգայնական ծայրայեղ աջ կուսակցութիւնը կապ ունի ձգտեալ միջոցառումներուն մէջ:

Սուրիացի 60 Փախստականներ Չերբակալուած Լիբանանեան Ծովուծի Կողմէ

Naharnet լրատու գործակալութեան համաձայն լիբանանեան բանակի ծովային հետախուզանաւի միջոցով, առաջին առնուած է փախստականներու արաքի մը: Անոնք կազնեցուցած են մեծ մասամբ սուրիացիներ փոխադրող նաև մը որ Լիբանանէն դէպի Կիպրոս կ'ուղեւորուէր: Այս առթիւ լոյս ընծայուած հաղորդարգրութեան մէջ կ'ըսուի թէ նաեւ 59 սուրիացի եւ 1 լիբանանցի փախստականներ ճամբայ ելած են, Լիբանանի Թրիփոլի քաղաքէն: Շաբաթ օր լիբանանեան ոստիկանութիւնը 51 սուրիացիներ ձերբակալած է: Անոնք ծրագրած էին Կիպրոս երթալ, անձ գլուխի վճարելով 2,500 տոլար:



Արդարեւ, բանակին համաձայն, Ապրիլ ամսուան վերջերը 69 սուրիացիներ եւս կանգնեցուցած են: Նշենք նաեւ որ 6 միլիոն բնակչութիւն ունեցող Լիբանանի մէջ, ներկայիս կ'ապրին 1 միլիոն սուրիացիներ: 2019էն ի վեր տասնեակ հազարաւոր պաղեստինցի եւ սուրիացի գաղթականներ փախուստ տուած են Լիբանանէն, գլխաւորաբար անգործութեան պատճառով: Ներկայիս կացութիւնն աւելի վատթարացած է քորոնա ժահրի եւ նաւահանգիստի պայթիւնէն ետք, երկրէն ներս ստեղծուած տնտեսական ահաւոր վիճակին հետեւանքով:

Բոլորը Դէպի Արտահերթ Ընտրութիւններ

Շարունակուած էջ 1-էն

թէ ինք կրնայ հասնիլ իշխանութեան ու դարձեալ ղեկավարել երկիրը: Ան կը յայտարարէ որ, «երբեք ընտրութիւն չէ կորսնցուցած»: Սակայն, փաստը կը մնայ այն որ, ե՛ւ 1998-ին, իր առաջին նախագահական ընտրութեան ընթացքին, ե՛ւ 2003-ի ընտրութիւններուն, ինք պարտուած էր Կարէն Դեմիրճեանի եւ ապա Ստեփան Դեմիրճեանի դէմ, սակայն, նախագահի աթոռին մատած էր համատարած կեղծիքներու շնորհիւ:

JOIN ARMENIAN COUNCIL OF AMERICA'S WASHINGTON D.C. REPRESENTATIVE TANIEL KOUSHAKJIAN IN A ZOOM DISCUSSION REGARDING THE RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE BY CONGRESS AND THE WHITE HOUSE, AND KEY ISSUES THAT ARE OF CONCERN TO ARMENIAN AMERICANS.

SATURDAY
MAY 22, 2021

10:30 A.M. PST.
1:30 P.M. EST.

REGISTER AT
[HTTPS://ARMENIANCOUNCIL.ORG/ACA/ZOOM](https://armeniancouncil.org/ACA/Zoom)
info@armeniancouncil.org

Հարիւրամեակ - Կարսի Յանձնումը 1920 Հոկտեմբեր 30 Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոս (1867-1952)



ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Հայրենասեր Հոգեւորականը

Ներկայ 2020 թուականին, ի յուշ Մեծ Հայրապետին Տ.Տ. Գարեգին Ա Յովսէփեանց կիլիկիոյ Կաթողիկոսին եւ ի յարգանս իր անխախտ հայրենասիրութեան խոնարհաբար կ'անդրադառնամ դար մը առաջ 1920 թուականի Կարսի յանձնումին, հետեւելով Հայրապետին յետագային գրի առած «Յուշերուն»: Զանոնք աչքիս առջեւ ունիմ երբ այն ատեն նորապսակ եպիսկոպոս, յետագային գրի առած է թէ ինք եւ մի քանի հայ գիտնականներ Հայաստանի մէջ զբաբած էին հնագիտական հետազոտական աշխատանքով, երբ 1920 թուականին թուրքիա կը յարձակէր Հայաստանի սահմաններէն ներս՝ դէպի Կարս:

1920 Սեպտեմբեր 22-ին երբ թուրք բանակը Օլթի կը մտնէր եւ կը գրաւէր Սարըղամիշը, Կաղզուանն ու Սուրմալուն, հայեր փախչելով կը հաւաքուէին Կարսի մէջ ուր քաղաքին անառիկ բերդը կար, իսկ հոկտեմբերին թրքական բանակը Կարս ներխուժելով կը դիմէր դէպի բերդը: Ժողովուրդը փախուստ կուտար դէպի Ձոր կոչուած կիրճը, Ալեքսանդրապոլի (Կիւմրիի) ուղղութեամբ:

Ճգնաժամային այդ օրերուն Կարս կը հասնէր հայրենասէր հոգեւորական Գարեգին Եպիսկոպոս Յովսէփեան, Գէորգեան ձեմարանի անդրանիկ սաներէն, որ կը միանար դէպի Ձոր փախչողներու խումբին ու կը խորտուէր գիրենք, ինչպէս երկու տարի առաջ, 1918-ի Սարդարապատի կռիւին, նոյնպէս իսկական հերոս Գարեգին Եպիսկոպոս պատրաստակամութիւն կը յայտնէր ճակատ երթալու եւ խրատուելու հայ զօրականները, ստանալէ ետք Տ.Տ. Գէորգ Ե Սուրենեանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութիւնը: Ալեքսանդրապոլէն անցնելով Սրբազանը կրօնական թափօր կազմել կուտար քաղաքի Սուրբ Աստուածածին եկեղեցիէն մինչեւ քաղաքապետարան, չորս եկեղեցիներու շուրջապատէս քահանաներով, որոնց գլուխը անցած, եպիսկոպոսական լրիւ զգեստաւորումով, գաւազանով եւ խաչով, կուրծքին կախած իր «քաջութեան նշանի ժապաւէնը որ ստացել էինք Սարդարապատի ճակատում մեր բերած մասնակցութեան եւ ծառայութեան համար»:

Քաղաքապետարանին առջեւ

տեղի կ'ունենար «անդաստան եւ մաղթանք», որմէ ետք շտապ կը մեկնէին Կարս ներկայանալու ռազմաճակատի զօրավար Դանիէլ Փիրումեանին, առաջարկելով իրենց ծառայութիւնը բերել հայրենիքին: Փիրումեան Սարդարապատի յաղթանակին «Աւագ Զօրավարութեան» աստիճան ստացած էր, եւ գինդադարէն ետք, Կարսը հայոց ձեռքը անցնելով բերդապահ նշանակուած: Ինչպէս կը վկայէ Գարեգին Եպիսկոպոս, Փիրումեանն աստիճանով աւելի բարձր էին զօրավար Նազարբէգեանը՝ Երեւան, զօրավար Սիլիկեանը՝ Ալեքսանդրապոլ, եւ Սուրմալուի մէջ զօրավար էր Դրոն (Դրասդամատ Կանաեանը) իրենց սպաներով:



ԵՐԱՆԱՆՈՐԸ Տ. Տ. ԳՐԵԳՈՐ Ե ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՐՈՒ ՏՆԵՆ ԳԵՂԵՍԻՍ

Կարսի Մեջ

Գարեգին Սրբազան նախ պատարագ կը մատուցանէր Կարսի Սուրբ Առաքելոց մայր եկեղեցւոյ մէջ հոն հասած առաջին կիրակի օրը, ի ներկայութեան «հայ գինուորական եւ քաղաքական ամբողջ պաշտօնէութեան», յատուկ մաղթանք կատարելով հայոց զօրքերուն համար: Փիրումեան սիրով կ'ընդունէր Ղարաբաղցի իր հայրենակից Սրբազանը եւ իրեն ընկերակից հայորդիները, յանձնարարելով որ Սրբազանը ձի հեծած Սարըղամիշ երթար, դէպի ռազմաճակատ, օրհնելու համար գինուորները՝ յաղթանակի կոչ ուղղելով անոնց: Ապա, Փիրումեանի հրահանգով Գարեգին Եպիսկոպոս Կարս կը վերադառնար ու կ'այցելէր հայ որբանոցներն ու հիւանդանոցները՝ քաջալերելու համար անկեանները:

Յուսահատ Կացութիւն

Երբ Գարեգին Սրբազան դժբախտ հայերուն դէպի Ձոր նա-

հանջը կը տեսնէր, ինչպէս նաեւ Փիրումեանի յուսահատ վիճակը, ակամայ պիտի լսէր զօրավարին դիմումը: «Սրբազան, մի բան դուք պէտք է փորձէք, անձամբ բերդի գլուխը պիտի բարձրանաք եւ յայտնէք մեր անձնատուութիւնը»: Տրուած հրահանգին վրայ Գարեգին Եպիսկոպոս երկու գինակիցներով՝ գնդապետ Վահան Տէր Առաքելեանի եւ օդաչու սպայի մը, բերդ կը բարձրանար եւ սպիտակ դրօշը կը պարզէր, վտանգելով նոյն իսկ իր կեանքը:

Հոն երեքը մէկ կը ձեռքաւարուէին թուրքերուն կողմէ եւ կը տարուէին թուրք գնդապետին մօտ որուն Սրբազանը կ'ըսէր թէ «մենք յաղթուած ենք եւ եկել ենք յայտնելու թէ անձնատու ենք լինում» դիմելով որ «մարդասիրութեամբ եւ գութով» վարուէր եւ դադրեցնէր կրակը Ձորին մէջ լեցուած «անմեղ երախաներուն եւ որբանոցներուն», անոնց կեանքը փրկելու համար: Սրբազանի խնդրանքը կը կատարուէր, կրակը կը դադրեցնէին, եւ ինք խորհրդակցաբար զօրավար Փիրումեանին հետ, երկուքը կ'արտօնուէին միանաբար Ձոր իջնել եւ տանջուած հայերը հաւաքել ու Կարս հասցնել:

Կարսի Յանձնումը

Կարսը թուրքին յանձնուած էր, եւ Գարեգին Եպիսկոպոս որպէս հայրենասէր մարդ կատարած էր իր կարելին, եւ սակայն հիասթափ եղած Կարսի եւ անառիկ բերդին յանձնումին համար: Ան ըսեր էր թէ «Ազգերի պամութեան մէջ դժուար է գտնել այնպիսի խաչատուակ պարտութիւն ինչպիսին մերն էր այդ օրերուն. լաւ կը համարէինք մի քանի հազար կոտորուէինք բերդի տակ, պաշտպանելով մեր հայրենիքը, քան անարգ փախստեամբ փրկէինք մեր կաշիները»: Կարս յանձնուեցաւ 1920 հոկտեմբեր 30-ին: Գարեգին Եպս. Յովսէփեան իր Յուշերուն մէջ կ'աւելցնէ թէ խիստ մեղադրանքներու ենթարկուեցան Դանիէլ Փիրումեանն ու Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանը որոնք միանաբար չգործելով պատճառ դարձան Կարսի յանձնումին՝ առանց կռիւի:

Կարսի գրաւումէն ետք թուրք կառավարութիւնը կը խուզարկէր հայոց բնակարանները եւ վատ պայմաններու տակ բռնի աշխատանքի կը լծէր զանոնք, եւ շատեր խստութեան չզիմանալով կը մեռնէին: Գարեգին Եպիսկոպոս կը մնար պատնէշին վրայ ու կ'այցելէր որբանոցներն ու հիւանդանոցները, եւ նոյնիսկ պետական արտօնութեամբ Կարսի հայ եկեղեցիներուն մէջ ժամապաշտութիւն ալ կը կատարէր՝ ի մխիթարութիւն

վշտացեալ իր հօտին:

Ձեռագիր ճաշոց Մատեանը

Այդ ծանր օրերուն, հայագէտ եւ արուեստաբան Գարեգին Յովսէփեան Եպիսկոպոս կը զբաղէր նոյնիսկ հայերէն ձեռագիրներով, ինչպիսին էր Կարսեցի բժիշկ Երզնկացեանի մօտ պահուած Ագուլից վանքի մանրանկարեալ ճաշոցը որ մնացեր էր Երզնկացեանի կնոջ պապէն որպէս յիշատակ իր թոռան: Ձեռագիր ճաշոցը Կարսէն դէպի Ձոր փախուստի ատեն պիտի իյնար թուրքերուն ձեռքը եթէ Երզնկացեան հոգածու չըլլար անոր: Սրբազանի տուած տեղեկութիւններէն կը պարզուէր որ ճաշոցը «գարդարուած էր կենդանագիրներով, թռչնագիրներով եւ ամբողջ երեսի պատկերներով», եւ հաւանաբար ԺԳ. դարու գործ մըն էր:



Գերութիւն եւ Վերադարձ Ս. Էջմիածին

Գարեգին Եպիսկոպոս գերի վիճակի մէջ Կարս մնացած է ատեն մը, եւ մի քանի անգամ դիմած Կարսի թուրք կառավարիչին գինք ազատ արձակելու եւ Հայաստան վերադառնալու, սակայն միշտ մերժուած էր: Ընդհակառակը, նոյնմբեր 18-ին խուզարկութեան ենթարկուած է եւ բանտարկուած բազմաթիւ հայ կալանաւորներու հետ, եւ ապա աքսորուած Սարըղամիշ, եւ հոնկէ ալ փախած ետ դէպի Կարս: Փախուստի ճամբան եղած է խիստ տառապալից, ինչպէս Սրբազանը ինք կը նկարագրէ, թէ «սոված եւ մերկ» մինչեւ առաւօտ անտառներուն մէջ պահուելու լու վերջապէս հասնելով Ետիքիլիս գիւղը, ուր կը ձեռքաւարուէր: Գարեգին Յովսէփեան Եպիսկոպոս ծեծի եւ խոչտանգումի տակ կը հիւանդանար, եւ երեք շաբաթ ետք բռնի աշխատանքի կը լծէին գինք «Կարին գնացող վագոնները բեռնելու»:

Բարեբախտաբար վերջ կը գտնէր հերոս հոգեւորական Գարեգին Սրբազանի ողիսականը իր կրկին փախուստով 1921 թուի յունուար 19-ին, երբ կը դիմէր Սարըղամիշի կայարանապետի օգնականին, յայտնելով որ ինք լուսանկարիչ էր եւ թէ իր գործիքները Կարս կը գտնուէին, խնդրելով թոյլ տալ իրեն երթալու եւ գանոնք բերելու: Կարս երթալով Սրբազանը կ'ապաստանէր Ամերիկեան հայոց որբանոցը մինչեւ մարտ 21: Այդ ժամանակ Կարսի հայկական որբանոցները կը տեղափոխուէին Սովետական Հայաստան, որոնց մէջ կը գտնուէր նաեւ ծպտեալ Գարեգին Եպիսկոպոս Յովսէփեան, որ ապահով կը հասնէր Ալեքսանդրապոլ, եւ յուլիս ամսուն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ՎԱՐՁՈՒ ԲՆԱԿԱՐԱՆ ՀՈԼԻՎՈՒՏԻ ՄԷՋ
Վարձու է 4 unit-անոց security շէնքի մէջ 3 սենեակ 2.5 բաղնիք ունեցող Townhouse մը լաւ շրջանի մէջ: Ամբողջութեամբ վերանորոգուած, նոր բաղնիք, նոր լեմիւնէթ, նոր կրամիտ, central AC/H, պատշգամ եւ Fireplace: Garage-ին մէջ կրնաք ձեր washer/dryer-ը տեղադրել: Section 8 OK.
Հեռաձայնէք Մերիլին՝ 213-448-4507:

Նոր Լոյս Ընծայած Հատորին Առթիւ Գէորգ Պետիկեանի «Տարին, Որ Անցաւ»



ԱՆԻ ՍԱՐՍԵԼԵԱՆ

2021-ի սկիզբին, գաղութիս ծանօթ գրիչ, ազգային դէմք, աւելի քան կէս դարու կրթական մշակ եւ ութը հատորներու հեղինակ՝ Գէորգ Պետիկեան, լոյս ընծայեց իր նոր հատորը՝ «Տարին, Որ Անցաւ» անունով:

Այս առթիւ, չիշեցնելու համեստ պարտականութեամբ ըսեմ, որ հիղինակի այս նոր հատորին մէջ հաւաքուած են անցեալ տարուան (2020) ընթացքին «Քորոնա» համաճարակին, Արցախի պատերազմին, հեղինակին եւ անոր թողնելիքներուն միջեւ հարազատ գրոյցներուն եւ ազգային ու համամարդկային զանազան իրադարձութիւններու մասին Պետիկեանի յօդուածները:

Բայց, ինչ որ ալ ըլլան մեր տրամադրութիւնները՝ դրական կամ քմահաճ, հայ գիրքը պէտք է որ կարդացուի, բազմապէս քաջալերուի ու փրկուի կորուստէ, որովհետեւ ան է որ հայ մարդուն հոգին ու միտքը կրնայ ջերմացնել:

Չմոռնանք սակայն, որ նոյնքան կարեւոր է հայ գրագէտները քաջալերել: Այս եւս մեր մշակութային առաքելութիւնն է. աւանդ է, «եթէ կ'ուզէք» որ պէտք է շարունակուի:

Խորքին մէջ, հայ գիրքը փրկել կը նշանակէ նաեւ փրկել անոր հեղինակը:

Արդ, այս հատորը կ'ընդգրկէ 43 արձակ եւ 2 չափածոյ կտորներ, ինչպէս նաեւ զեղեցիկ ու տպաւորիչ վկայութիւն մը՝ տք. Արմենակ Եղիայեանի գրիչէն, որոնք բոլորն ալ էջ առ էջ կու գան ջերմացնելու Սփիւռքի գրականութեան գորչ երկիրները:

Նաեւ ըսեմ, որ «Տարին, որ անցաւ»ը, վկայութիւն մըն է այն հասկացութեան, թէ գիրքը նոյնիսկ հեղինակ մարդն է:

Գէորգ Պետիկեանի ոգեշնչող գրութիւններն ու հատորները միշտ եղած են բանբեր ու թարգման ընթերցողի սրտի ու մտքի կանչին: Իր բոլոր պատմուածքներն ու խոհական արտայայտութիւնները, արդէն իսկ կը պարզեն ու կը բացայայտեն հեղինակի սփռուած քաջալու յատուկ եւ վայել պարունակները:

Եթէ քիչ մը աւելի մօտէն հետեւինք իր գրիչին, կարդանք իր հատորները, անպայման պիտի հանդիպինք, տեսնենք եւ վկայենք, թէ Պետիկեան միշտ գրած է իր ծննդավայր Հայկապոլի ու հայկապոլութեան մասին, լուսարձակի տակ

առնելով հայկապոլի կեանքը, մշակոյթն ու հայկապոլի մղձաւանջ: Եւ աւելին՝ հայու յարուստիւն առնելու տենչը, այդ երկրի պատերազմի պատճառած աւերակներու ու աւերներու ընդմէջէն:

Նաեւ ան գրած է թշնամիի ձեռամբ կործանուած պատմական արժէքներու կորուստին մասին, երբ այցելեց եւ ակնատես եղած էր Արեւմտեան Հայաստանի մէջ գտնուող աւերակ դարձած բերդաքաղաք Անին (Երբ Տեսայ Անին) փոխանցելով յուզումներն ու ապրումները իր գրիչին հետեւաբար՝ ընթերցողի հոգիին:

Գէորգ Պետիկեանի վերջին ինքնատիպ հատորը՝ (ՏԱՐԻՆ, ՈՐ ԱՆՑԱԻ) 2020 թուականը կրող այդ տարուայ մարդկութեան չնախատեսուած տագնապներու տարափի եւ յուզումներու քանդակէ կարծես, բազմազան ստորաբաժանումներով հատոր մը, որ մեր հոգիներու ծալքերուն, պոթիկունն ու ընթերցումն է ինչպէս կը վկայէ տք. Արմենակ Եղիայեանը այս հատորի վերջին՝ իր վկայութեամբ:

Իւրաքանչիւր պատմուածք իր հմայքն ու սրտի ուղղուած խօսքն ու պատգամը ունի: Եւ այսպէս, ընթերցողը անընդհատ մենախօսութեան կերպարին մէջ կը մտնէ ինքնաբերաբար:

Պետիկեանի ինքնատիպ ոճը, անոր հիւմորով խառն պարզ, թարմ եւ առողջ կերպով հայաշխարհը ներկայացնելու գրիչը, անկասկած կը բխի իրապաշտութեան ակունքներէն եւ կու գայ հաստատելու հեղինակի հատուկ գրողի ու մտաւորականի վաստակը, անոր հայ լեզուի, միտքի, մշակի ու երկարամեայ ուսուցիչ-տնօրէնի վաստակին հետ առնչուող կէտերը:

Գէորգ Պետիկեան իր անձնական ճիգերով եւ մաքառելով սփիւռքեան այլօրինակ խոչընդոտներու եւ արգելակող ալիքներու դէմ, իր պատուանդանը կերտած է իբրեւ մամուլի մարդ, գրող, դաստիարակ եւ մշակոյթի սպասարկու:

Հեղինակը կը տազնապի հայ լեզուի նահանջով, մեր ժողովուրդի այլասերման երեւոյթներով եւ արմատներուն վերադառնալու տենդով, սակայն նաեւ՝ նոր աշխարհին մէջ մանուկն ու երիտասարդը իսկական արժէքներէ հեռու պահող վիճակներուն հետեւանքներով:

Գիրքին մէջ տեղ գտած են նաեւ ամերիկեան միջավայրէն քաղուած միջադէպեր եւ մտորումներ: Նկարագրութիւններուն յուզակա-նութիւնը խորապէս տպաւորիչ դար-

Մարալ Այվազի Նոր Տեսահոլովակը



Պոլսահայ յայտնի մեներգչուհի Մարալ Այվազ-Չաղըզուպուքճու վերջերս հրատարակ հանեց նոր տեսահոլովակ մը: Տեսահոլովակը նկարահանուեցաւ «Անվերջ Խաւար» անուն երգին, որ յօրինուած է յայտնի արուեստագէտ Արա Տինքճեանի երաժշտութեամբ եւ Մարալ Այվազի խօսքերով: Արա Տինքճեանի այս յօրինումին բուն անունն է «Փիքըր», որ անցեալին զանազան երկիրներու մէջ բազմաթիւ լեզուներով նաեւ երգուած է: Մարալը արդէն այս երգին տեղ տուած էր իր անդրանիկ սկաւառակին մէջ, որը լոյս տեսած էր Յունիս 2019ին:

Երգչուհին, պատերազմներէ տուժած մարդոց ցաւն ու տառապանքը արտայայտելու նպատակով գրի առած է այս երգին բառերը: Ան յետոյ կը մտածէ, որ երգի բառերու խորհուրդը ձեւափոխուի պատգամակիր գծանկարներու եւ այդպէսով անմեղ մարդոց ենթարկուած սրտածախի իրադարձութիւնները հանրութիւններու ուշադրութեան յանձնուի: Վերջապէս կ'ուսնանաք աշխուժութիւն եւ ոգեւորութիւն ստեղծող տեսահոլովակ մը, որ պատրաստուած է Երեւանցի արուեստագէտ Հայկ Սայատեանի

կողմէ, իսկ Մարալի նկարահանումները կատարուած է Յարութիւն Տավուճեանի կողմէ: Երգչուհին տեսահոլովակի վերաբերեալ զգացումներն ու մտածումները կը բացատրէ հետեւեալ խօսքերով.

«Պատմութեան հին օրերէն սկսեալ մարդիկ անընդհատօրէն կը պատերազմին մասնաւանդ աշխարհաքաղաքական պատճառներու եւ երկիրներու շահամոլիկ հաշիւներու հետեւանքով: Պատերազմը, աշխարհի անվերջանալի իրականութիւնն է: Մահեր, կոտորածներ, աւերածութիւններ, ոչնչացումներ, պարտադիր տեղահանութիւններ եւ այդ տեղահանութեանց ընթացքին անմարդկային ցաւալի վերաբերումներ: Դժբախտաբար մեծ տէրութիւններ դասեր չեն քաղած այս ողբերգութիւններէն, իսկ տառապողները կ'ըլլան միայն երախաներն ու անմեղ բնակիչները: Ես այս երգով ուզեցի դառնալ որդեկորոյց մայրերու ձայնը, որովհետեւ գիտեմ մեղեդիներու այն ոյժը, որ շուտով կը հասնի բոլորին եւ կը չիշեցնէ մեզ մեր անհատ ըլլալը:»

Տեսահոլովակը կարելի է դիտել հետեւեալ կայքէջն: <https://youtu.be/aXcbGZWbFjY>

ձուցած է գիրքին բոլոր մասերը:

Ու այսպէս, Արցախեան 44 օրուայ պատերազմի պատճառած յուսաբեկութիւնը, համայն աշխարհն սարսափի մատնող անիծեալ ու մարդասպան «Քորոնա» ժահրը, թօշկաւորուեցաւ հոգեկան ապրումները, ընտանիքներու առօրեայ կեանքին դրուագները, թողնիկ ու մեծ հայր երկխօսութիւնները, հայապահպանման մարտահրաւէրներն ու ձուլման սպառնալիքները եւ այլ նիւթեր բովանդակող հատորը՝ մեր ամէնօրեայ կեանքին վերցուած թատերախաղ մըն է կարծես, ուր իւրաքանչիւր հերոսի

մէջ կը գտնես ինքը, քու անձը, իսկ բեմադրիչը՝ գիրքին հեղինակը:

Ինչպէս կը տեսնէք, Գէորգ Պետիկեանի հոգին ու սիրտը իր հայութիւնն է: Ընթերցողը վստահաբար, հաճոյքով պիտի ըմբռնէ նաեւ սոյն նոր հատորը:

Արդ, գրիչը դաւար, սիրելի Գէորգ, մաղթանքս է միշտ շարունակեալ գրել քու հաճելի ու ինքնատիպ ոճովդ եւ քաղափարներովդ ու մեր հոգիներուն արձագանգ տա քու գրիչովդ, ամէնէն կարեւորը, ինչպէս տք. Արմենակ Եղիայեան կը վկայէ. «սրտէս խօսիս, ինչպէս միշտ»:

Սեւ Ծովը Կռուախնձո՞ր

Շարունակուած էջ 11-էն

թիւններու եւ աշխարհագրական կարեւոր դիրքերու վրայ հակակշիռ ունենալու համար, ինչպէս՝ նաւահանգիստներ, ջրանցքներ, երկաթուղագիծեր ու գետային ու այլ փոխադրամիջոցներու համակարգեր: Վերջին զարգացումները ցոյց կու տան, որ Սեւ ծովը թէ՛ առիթներու եւ թէ՛ մարտահրաւէրներու շրջան է, թէ՛ կռուախնձոր է եւ թէ՛ համագործակցութեան գօտի: Մէկ կողմէ ներգրաւուած են Եւրոպական Միութիւնը, ՆԱԹՕ-ն ու Միացեալ Նահանգները, միւս կողմէ Ռուսիան, նաեւ՝ Թուրքիան, որ կամաց-կամաց կը հեռանայ ՆԱԹՕ-ի հանդէպ իր պարտաւորութիւններէն՝ վարելով աւելի ինք-

նագլուխ եւ օսմանաեան կայսերական երազներով ապրող քաղաքականութիւն մը:

Կը մնայ նշել, որ Ասիա-Կասպից ծով-Սեւ ծով տարանցումի միջանցքը կը խոստանայ ներածումի եւ արտածումի շուկաներ բանալ առնչակից բոլոր երկիրներուն համար: Այս առումով, Հարաւային Կովկասի մէջ, Ատրպէյճանն ու Վրաստանը իրենք գիրքնք կը ներկայացնեն իբրեւ խոստման իրեր եւ կարեւոր գործընկերներ: Անոնք նաեւ կը զարգացնեն համապատասխան ենթակառուցյան եւ կ'ապահովեն վարկեր մասնաւորաբար Չինաստանի օժանդակութեամբ: Թէ Հայաստան ի՞նչ կ'ընէ այս մարդին մէջ, դժբախտաբար տուեալներ չգտանք.

Քաղաքական Դիսկուրսը Վերածուել է

Շարունակուած էջ 2-էն

ազգային իդէոլոգիան տուրք չտանք: Չի կարելի հպարտանալ հերոսամարտերով եւ միաժամանակ այդ հերոսամարտերում աչքի ընկածների ունեցուածքը հաշուել կամ նրանց արտօնութիւններից դժգոհել: Պարզ ասէք մարդկանց՝ եթէ պատերազմի մէջ ենք, կան եւ լինելու են առաքելովսիսեաններ՝ առաջնային դերերում, եւ այդ դէպքում չեն կարող կամերտոններ լինել՝ Գուշի հազնող գլամուրների եւ սեւ ժապաւէններից դեպրեսիայի մէջ ընկնողների տեսքով:

Իսկ հիմա նորից անհասկանալի կոնստրուկցիաներ են ձեւաւորուած, եւ ֆիզուրները նորից նոյնն են ու անկանոն դասաւորուած տարբեր քաղաքական դաշինքներում, եւ սա նորից քառու է առաջացնում: Առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանն անյոյս գեղարուեստական ոճի նամակներ է գրում իր քաղաքական հակառակորդներին, որոնք վերաբերում են իշխանափոխութեան անհրաժեշտութեանը, իսկ յետագայ անելիքների մասին՝ ոչ մի խօսք:

Երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանն ունի որոշակի ծրագիր եւ ազնուօրէն առաջարկում է այն ամէնը, ինչն ինքն ի գորու է անել իշխանութեան գալու պարագայում, բայց նրա աշխարհընկալումներն էլ ժամանակավրէպ են: Նրա ելուցներէն ահնայատ է, որ իր համար քարտէզի վրայ կայ մէկ պետութիւն՝ Ռուսաստանը, որի հետ սերտ համագործակցութեան մէջ է տեսնում բոլոր ինդիւիդուալ կարգաւորումը: Հասկանալի է, որ նա միավեկտոր քաղաքականութիւն է առաջարկում՝ լաւ իմանալով ուսումնարան մօտեցումների մասին, քանզի վերջիններս շատ խանդոտ են վերաբերուած, երբ իրենց գործընկեր պետութիւնները փորձում են այլ հնարաւորութիւններ փնտռել:

Գուցէ 10-15 տարի առաջ հնարաւոր լինէր Ռոբերտ Քոչարեանի առաջարկած մոտեցումը շարժուել եւ որոշակի յաջողութիւններ արձանագրել, բայց ներկայումս Ռուսաստանը ոչ շահաւէտ դիրքերում է յայտնուել, բոլոր առումներով՝ ե՛լ տնտեսապէս, ե՛լ ռազմականօրէն, ե՛լ աշխարհաքաղաքական առումով: Ինչպէ՞ս կարող ենք մեր ապագան կապել մի պետութեան հետ, որն ընդհանրապէս անկիւն է քշուած համաշխարհային քաղաքակրթութեան կողմից եւ հիմա թուրքալեզու աշխարհի հետ է շփման եզրեր որոնում:

Երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի ղեկավարած քաղաքական ուժը՝ ՀՀԿ-ն, այս պահին դեռ ոչինչ չի առաջարկում, եւ նրանք նոստալգիկ ելուցներ են ունենում ու միակ էլքը տեսնում են ազգա-

դաւին հեռացնելու մէջ, որից յետոյ կը փրկուի հայրենիքը: Ինքը՝ Սերժ Սարգսեանը, շատ ակտիւութիւն չի ցուցաբերում, եւ, ըստ իս, դրա պատճառն այն է, որ նա կարծես դեռ չի ներել ժողովրդին, հետեւաբար, չի պատրաստուած քաղաքական լուծումներից խօսել կամ առաջարկներ ներկայացնել: Առայժմ երրորդ նախագահը նախընտրում է ժամանակ առ ժամանակ հին գաղտնիքներից մի քանիսը բացել, եւ, իհարկէ, նա դա անում է այնպէս, որ այդ բացայայտումներից յետոյ աւելի շատ հարցեր են առաջանում: Սերժ Ազատիչի հարցազրոյցները դարձել են իսկական հեռուստասերիալ՝ ամէն սերիան վերջանում է ամենահետաքրքիր պահին, եւ բոլորն անհամբեր սպասում են յաջորդին, եւ այդ հետաքրքիր ստրատեգիայի շնորհիւ երրորդ նախագահը գնալով աւելի ու աւելի է մտերմանում ժողովրդի հետ:

Իհարկէ, իշխանութիւնների մասին խօսելն անիմաստ է, քանի որ իրավիճակը սրուել է հենց իրենց օրօք, եւ եթէ նրանք լուծումներ գտած լինէին, ապա այսպիսի իրավիճակում չէինք յայտնուել կամ գոնէ իրավիճակից դուրս գալու ուղղութեամբ կ'ընթանայինք, իսկ մենք դեռ շարունակում ենք գահավիժել: Բայց ընդդիմադիրները չպէտք է սին յոյսեր փայտայեն, որ իրենք միայն իշխանութեան սխալների վրայ չեն ունեցում կարող են ընտրութիւններում յաղթել: Միեւնոյն է՝ յաղթելու պարագայում անգամ ստիպուած են լինելու վերը յիշատակուած հարցերին պատասխանել, եւ դրանցից խուսափել պարզապէս անհնար է:

Երկրի վիճակն իրօք օրհասական է, բայց, փաստօրէն, քաղաքական դաշտում չկան հասկանալի լուծումներ, եւ գլխաւոր հարցերը շարունակում են մնալ անպատասխան: Քաղաքական դիսկուրսն այժմ էլ, ինչպէս նախկինում, բաղկացած է կենացներից, ուստիպատական մտքերից, վիրաւորանքներից, բանասրկութիւններից եւ ինչոր մակերեսային քննարկումներից: Ցաւօք, բոլորը կարծես լծուել են հեծանիւ յօրինելու անիմաստ գործին եւ արհամարհում են քաղաքական դասական ընկալումները: Բայց չէ՞ որ դրանց մէջ են ամփոփուած մարդկութեան ողջ փորձն ու իմաստութիւնը, եւ դրանք են պետականաշինութեան կողմնորոշիչներն ու բանաձեւերը եւ հենց դրանք անտեսելու ու արհամարհելու պատճառով ենք յայտնուել այս վիճակում:

Երբ քաղաքական դիսկուրսն անիմաստ լեզուակռուի է վարածուել, իսկ պետութիւնը՝ անօգնական անդամալոյծի:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

Մեր Թշնամիները Եւ Բարեկամները

Շարունակուած էջ 2-էն

տանն է այդպիսին համարում: Մի՞թէ օրինաչափական չէ այսօր նաեւ այս հարցը: Ըստ այդմ, արդեօ՞ք մեր թշնամին է Արեւմուտքը, որն, ըստ ՌԴ բարձրագոյն ղեկավարութեան՝ «ուսման թշնամին է» դեռ ի վան Ահեղից, ինչպէս պնդում է, ասենք, ՌԴ ԱԽՔ Պատրուշեւը:

Նախ, սկսենք նրանից, որ, իհարկէ, ո՛չ, Արեւմուտքը մեր թշնամին չէ, որ Արեւմուտքը պատժամիջոցներ է յայտարարել Ռուսաստանին, Բելառուսին, բայց ոչ մեզ, որ Արեւմուտքից վտարուած են ուսումնականներն, այլ ոչ թէ հայ, որ Պայտրնը մատ է թափահարում ուսման ռեզիմէն: Եթէ մեր եւ այլն եւ այդպէս շարունակ: Իսկ օրերս ուսական մամուլով շրջանառուեց տեղեկութիւն, ըստ որի ՌԴ ԱԳՆ-ը մտադիր է կազմել «թշնամական երկրների ցուցակ», որում ներառուած են ԱՄՆ-ն, Լիտւան, Լատւիան, Էստոնիան, Վրաստանը, Ուկրաինան, Լեհաստանը, Չեխիան, Մեծ Բրիտանիան: Այստեղ չկան Հայաստանի թշնամիներ, նշուած բոլոր երկրները Երեւանի հետ ունեն բարեկամական յարաբերութիւններ, որոնք ունեն խորացնելու կարիք, այլ ոչ թէ անհասկանալի շարժառիթներով գոհաբերման՝ «յանտու դարաւոր բարեկամութեան», ինչպէս, օրինակ, տեղի ունեցաւ Ուկրաինայի պարագայում 2014-ին, երբ, ինչպէս յայտնի ասացուածքում՝ ջրհորի մէջ մի հիմարի գցած քարը հարկը հոգով մինչ օրս չենք կարողանում հանել: Վրաստանը մեր լաւագոյն հարեւանն է, ԱՄՆ-ը՝ աշխարհի թիւ մէկ գերտէրութիւն, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, որի հետ նոյնպէս բարեկամական յարաբերութիւններ են, փայլուն յարաբերութիւններ են Բալթեան երկրների հետ, իսկ Լիտւայի ԱԳ նախարար Լանդսբերգիսն օրերս էր պաշտօնական այցով Երեւանում:

Փայլուն յարաբերութիւններ են Լեհաստանի, Չեխիայի հետ, անհասկանալի են մնում յարաբերութիւնները Մեծ Բրիտանիայի հետ, որտեղ մինչ օրս դեսպան չունենք: Իսկ անհասկանալի են աւելի շատ կիսադավադրապաշտական-կիսաբանահիւսական գաւազակութեան մեծ շափաբաժնի պատճառով, յատկապէս «հիւսիսից» ստուգող, քան այդպիսին լինելու իրական հիմքերի պատճառով, էլ չեմ խօսում «աւանդական» գաւառամտութեան մասին: Ինչե՛ն է:

Ուշագրաւն այն է, որ Ռուսաստանի «թշնամիների» ցանկում, ինչպէս տեսնում ենք, մեր թշնամիները բացակայում են: Իհարկէ, «եղբայրութեան» մասին հակաքաղաքափոսական դատարկախօսութիւնները դեռ երկար են շարունակուելու, բայց փաստն այն է, որ մենք այլ երկրների «գլխի» մէջ տեղաճորելով մեր «բանահիւսական» եւ կարծրատիպային պատ-

կերացումները, գումարած մտաւոր ծուլութիւնը, եւ ըստ այդմ մեր սպասելիքները կառուցելով, կառուցելով նաեւ մեր արտաքին քաղաքականութիւնը՝ կանգնելու ենք այն նոյն կոտորած տաշտակի առաջ, որի առաջ յայտնուեցին 44-օրեայ պատերազմի օրերին:

Մինչդեռ, քաղաքականութեան մէջ, ինչպէս եւ թղթախաղում, իւրաքանչիւրը «խաղում» է այնպէս, ինչպէս կարողանում է, իսկ ինչպէս ուսման են ասում՝ «թղթախաղում եղբայր չկայ»: Իսկ պրեֆերանսում ասում են. «Լաւ է խաղընկերն առանց երկուսի, քան ինքը՝ առանց մէկի»: Եւ ուրեմն, ումի՞ց ենք նեղանում: Եթէ նեղանալ՝ ապա «խաղալ» չիմացողներից, «խաղը» չհասկացողներից:

Նեղանալ պէտք չէ, այլ պէտք է սեփական շահերից բխեցնել, թէ ով է թշնամին եւ ով՝ բարեկամը, ըստ այդմ՝ ինչպէս վարուել մէկի եւ միւսի հետ, այլ ոչ թէ անունը դնել «մեր անվտանգութիւնը», այն վերածել մի աղբամանի, որի մէջ գցում են բոլոր վախերը, համեմուտք քաղաքական որոշումներ մշակողների գաւառամտութեամբ եւ տարբեր կողմերից ազնուութեամբ գործունէութեամբ:

Եւ վերջին հարցը, որն անխուսափելիօրէն առաջանում է ԱՄՆ վերջին հարկը օրուայ աննախադէպ ակտիւացումից: Նախագահ Պայտրնն ակնյայտօրէն հանդէս է գալիս ոչ միայն որպէս ամերիկացիների նախագահ, այլեւ միանշանակօրէն որպէս Ազատ Աշխարհի առաջնորդ: Եւ ուրեմն, ժողովրդավարական Հայաստանն Ազատ Աշխարհի մաս է, թէ՛ նրա հակառակորդների, եւ արդեօք ինքներս մեզ համար ունենք այս հարցի անկեղծ պատասխանը:

Բնականաբար, վերջին հարցի պատասխանը մենք կը ստանանք ոչ միայն յունիսեան ընտրութիւնների արդիւնքներով, այլեւ մեր ամէնօրեայ գործունէութեամբ եւ վարուեցողութեամբ, ինչպէս նաեւ՝ մեր կարողութեամբ այդ պատասխանն Ազատ Աշխարհին պատշաճ կերպով հասցնելով: Սակայն, սա շատ դժուար գործ է, քանի քաղաքական դասի մօտ չի գերիշխում այն համոզումը, որ «ո՛չ միայն գենքով կայ հայոց փրկութիւն» (Ֆիդայական երգը վերախմբազրելով), այլեւ, մինչեւ գործը գենքին հասցնելը եւ տարբեր պղտոր եւ ոչ այնքան սթափ «փրկիչ» պերսոնաժների «լապչան» հալած իւղի տեղ ընդունելը՝ ռիսկերի գնահատման ինստիտուցիոնալ կարողութիւններով, հետախուզութեամբ, վերլուծութեամբ, այն ամէնով, ինչը կոչուած է արտաքին քաղաքականութիւն:

Ի վերջոյ, հայկական արտաքին քաղաքականութեան կրեդոն մեծ հաշուով կարող է լինել մէկը. ունենալ որքան հնարաւոր է շատ բարեկամներ, չէզոքներին դարձնել բարեկամ, իսկ թշնամիներին՝ չէզոքացնել:

«ԱՌԱԻՈՏ»

ԳՈՐԾԱԴՈՐ ԿՈՒԶՈՒԻ

Փասատիմայի անուշավաճառ Սարգիսը կարիքը ունի աշխատող օրիորդներու կամ տիկիներու խոհանոցի մէջ եւ դուրսը առեւտուրի առ ու ծախի համար

Չեռաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել Պրն. Վազգէնի (818) 966-5834
1776 E. Washington Blvd. Pasadena, CA:


Ձեր Ծանուցումները Վստահեցեք

«Մասիս» Շաբաթաթերթին

Massis2@earthlink.net
626-797-7680

Վարդան Գրիգորեանի Յիշատակին

ՎԱՅԱԳՆ ԱԲԳԱՐԵԱՆՑ



Դոկտ. Գրիգորեանը ծնունդ էր 1934թ. Ապրիլի 8ին, Իրանի Թալիզ քաղաքում:

Շրջանաւարտ Պէյրուսի Նշան փալանջեան ձեմարանից, հետեւել է ձեմարանի հայագիտական բարձրագոյն դասընթացներին, միաժամանակ լինելով Հայաստանի Հանրապետութեան վերջին վարչապետ՝ Սիմոն Վրացեանի քարտուղարներից մէկը: Պէյրուսի գտնուած տարիներին եղել է նաեւ Թեհրանի «Ալիք» օրաթերթի թղթակիցը:

Նա դոկտորական աստիճանի է արժանացել ԱՄՆի Ստանֆորդ համալսարանից, պրոֆեսորի աստիճանով պատմութիւն է դասաւանդել Սան-Ֆրանսիսկոյի նահանգային եւ այլ համալսարաններում: Նախագահն էր Նիւ Եորքի համալսարանի գրադարանի, ֆենսիվանիայի համալսարանի խորհրդատու եւ օտարազգի առաջին նախագահն էր Պրաունի համալսարանի եւ 1997 թուականից մինչեւ իր վախճանը՝ զբաղեցրել է Նիւ Եորքի Քարնեգի կորպորացիայի նախագահի պաշտօնը:

Հեղինակել է մի շարք գրքեր, արժանացել դոկտորական պատուոյ տիտղոսների, ստացել ԱՄՆ Ազգային Մարդասիրական մեդալ (1998) եւ նախագահական Ազատութեան մեդալ (2004):

Հայերէնից բացի տիրապետում էր անգլերէն, ֆրանսերէն, պարսկերէն եւ պորտուգալերէնին:

Յուշով եմ ուրիշներ դեռ շատ պիտի գրեն եւ մանրամասնօրէն անդրադառնան այս տաղանդաւոր հայի բարեմասնութիւններին:

Դոկտ. Գրիգորեանը ոչ միայն յարգուած գիտնական-պրոֆեսոր էր, այլ նաեւ՝ գուարթախօս:

Ներկայացնեմ իմ ունեցած փորձառութիւնից մի քանի օրինակներ. ձարտարագիտութեան ուսանող էի Սան Ֆրանսիսկոյի պետական համալսարանում: Նա պատմութիւն էր դասաւանդում նոյն համալսարանում:

Մերթ ընդ մերթ ճաշում էինք միասին համալսարանի ճաշարանում: 1968թ. Սան Ֆրանսիսկոյի եւ Բըրքլիի համալսարանները եղել էին Վիետնամի պատերազմի եւ այլ առիթների հակա-կառավարական շարժումների եւ ցոյցերի կենտրոն:

«Black Panthers» (Սեւ Յովազներ) չեղափոխական խմբակը կազմակերպել էր մի հանդիպում սրահներից մէկում: Նպատակն էր պահանջներ ձեւակերպել եւ ներկայացնել համալսարանի ղեկավարութեանը: Հանդիպմանը կարող էին մասնակցել միայն սեւամորթ ուսանողները, բայց պատկերացրէք, թէ ո՞վ էր հրաւիրուած: Այո՛, դոկտ. Գրիգորեանը:

Նա յարգուած եւ վստահելի անձնաւորութիւն էր: Նւսաստ եւ իմ մտերիմ ընկեր Միհրան Փիրումեանը ընկերակցում էինք դոկտ. Գրիգորեանին: Չեմ կարող մոռանալ, թէ ինչպէ՛ս մուտքի մօտ խոնուած սեւամորթ ուսանողները արագ ետ քաշուեցին ճամբալ բանալով մեզ համար:

2003 թուականի Նոյեմբերին, Լոս Անջելեսի Համազգային Մշակութային Միութիւնը, իր 75ամեակի հանդիսութեանը պատուեց դոկտ. Վարդան Գրիգորեանին:

Որպէս Համազգայինի Շրջանային վարչութեան ատենապետ պատիւ էր ինձ համար Լոս Անջելեսի միջազգային օդանաւակայանում ողջունելու մեր հիւրին: 35 տարիներ էին անցել, բայց նա ճանաչեց եւ երբ միմեանց ձեռք էինք սեղմում ժպտալով ասաց. «Շուրջ երկու ժամ առաջ, նախքան քեզ հանդիպելը, վերջին անգամ ձեռնուել եմ Քլինթ Իստվուդի (նշանաւոր դերասան եւ երկար ժամանակով կալիֆորնիայի Քարմէլ քաղաքի քաղաքապետ) հետ: Ես կարեւոր համագումարի էի հրաւիրուած եւ պրն. Իստվուդը ինքն անձամբ ինձ օդանաւակայան ուղեկցեց»:

Իր «Իմ կենսագրութիւնը» գրքի շնորհանդէսին, որը տեղի էր ունենում Գլենդէլի կենտրոնական գրադարանում: Նա պատմում էր իր կեանքի դրուագներից մէկի մասին:

Բարեսիրական ծրագրերից մէկում նա պարի է հրաւիրում իրանի նախկին թագուհուն՝ Ֆարրահին: Ինչպէս ինքն էր պատմում, - պարելու պահին մտաբերեցի տատիկիս եւ պատկերացնում էի, որ նա պիտի ասէր ինձ «Ծօ, գեղա՛ւ, հիմա թագուհու՞ն է հետ ես պարում...»:

Դեռ շատ բան կարելի է գրել Վարդան Գրիգորեան մարդու, գիտնականի եւ ամենակարեւորը, հայի անունը միջազգային ասպարէզում շողացնող հակայի մասին, բայց այն թողնե՛ք իր հարազատներին, գործընկերներին եւ նրա գործունէութեանը լաւատեղեակ անձնաւորութեանց:

ՄԱՅԱԶԴ



ԱՐԱ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ
(28 Յունիս 1952 - 5 Մայիս 2021)

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ-հօր եւ եղբօր՝ ԱՐԱ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ, որ անակնկալօրէն պատահեցաւ Չորեքշաբթի, Մայիս 5-ի առաւօտեան Ժ. 3:30-ին՝ իր բնակարանին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, Մայիս 20, 2021-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, Պըրպէնքի Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ, 3325, N. Glenoaks Blvd., Burbank, California, որուն պիտի յաջորդէ թաղումը՝ Կլենտէյլի (Glendale) Forest Lawn գերեզմանատան մէջ, 1712 S. Glendale Ave., CA:

Սգակիրներ՝
Տիկինը՝ այրի Տիանա Ահարոնեան
Դուստրը եւ ամուսինը՝ Տէր եւ Տիկ. Անտոն Եւ Ռիթա Սարուխանեաններ եւ զաւակունք՝ Քրիստին, Կապրիէլ եւ Քոլէթ Որդին՝ Տիար Ալեքս Ահարոնեան
Քոյրը եւ ամուսինը՝ Տէր եւ Տիկ. Շահէ եւ Արփի Կանիմեաններ, Քորոլ որդին եւ տիկինը՝ Տէր եւ Տիկ. Զոհրապ եւ Գարինէ Կանիմեաններ եւ դուստրը՝ Էրիս,
Քորոլ դուստրը՝ Օրդ. Թամար Կանիմեան,
Քորոլ որդին՝ Տոքթ. Շիրազ Կանիմեան
Աներորդին՝ Տէր եւ Տիկին Տիրան եւ Աննա Տեփանեաններ եւ համայն Ահարոնեան, Տեփանեան, Սարուխանեան, Կանիմեան, Տարեան, Յովսէփեան, Քէշիշեան, Պիլիմձեան, Թամեր, Արթիւրեան եւ Փոլատեան ընտանիքներն ու հարազատները:
Փոխան ծաղկեպսակի ձեր նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել «Նոր Օր» շաբաթաթերթին:

Ոչ Եւս Է Արա Ահարոնեան

Յաւով իմացանք գաղութիս ծանօթ անձնաւորութիւններէն ՌԱԿ Արեւմտեան Ամերիկայի շրջանային վարչութեան երկարամեայ անդամ, գիրքերու հեղինակ եւ հասարակական տարբեր կազմակերպութեանց հետ գործակցող Արա Ահարոնեանի անակնկալ մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, Մայիս 5ին, 2021, սրտի կաթուածի հետեւանքով:

Մեր խորագրաց ցաւակցութիւնները հանգուցեալի այրիին, զաւակներուն, ընտանեկան պարագներուն, ՌԱԿ ԱՄՆ-ի Արեւմտեան շրջանի վարչութեան, իր գաղափարի ընկերներուն եւ համայն հարազատներուն:

Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :-----

Email: -----

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՆ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Ախոյեաններու Լիկայի Եզրափակիչը Կրնայ Չկայանալ Իսթանպուլի Մէջ

Ախոյեաններու Լիկայի եզրափակիչը մրցումը կրնայ տեղափոխուիլ Իսթանպուլէն այլ քաղաք: Ախոյեաններու Լիկայի եզրափակիչ հասած երկու անգլիական խումբերու համար նախընտրելի է եզրափակիչ հանդիպումը կայացնել Լոնտոնի «Ուեմպլի» մարզադաշտին վրայ: Այս կերպ խումբերը կը խուսափին քորոնա ժահրի պատճառով յառաջացած թուիչքային խնդիրներէն: Խնդիր է նաեւ այն, որ Covid-19-ը մեծ տարածում ունի Թուրքիոյ մէջ:

Ֆութպոլի Ախոյեաններու Լիկայի 2020/21 մրցաշրջանի եզրափակիչին պիտի մրցին «Մանչեսթըր Սիթիին» եւ «Չելսին»:

Հանդիպումը նախատեսուած է Մայիսի 29-ին:



«Պարսելոնա»-«Աթլետիքո» Հանդիպումը Աւարտեցաւ Հաւասար Արդիւնքով

Սպանիոյ ֆութպոլի առաջնութեան 35-րդ հանգրուանի կեդրոնական խաղին «Պարսելոնան» հիւրընկալեց «Աթլետիքոյին»:

«Նոու Կամպ» մարզադաշտին վրայ կայացած խաղի ընթացքին առաւելութիւնը «Պարսելոնային» ի նպաստ էր, սակայն երկու խումբերն ալ չօգտագործեցին իրենց հնարաւորութիւնները եւ խաղն աւարտեցաւ 0:0 ոչ-ոքի հաշուով:

«Ռեալը» Մատրիտի մէջ ընդունեց «Սեւիլիային»: Ֆրանսացի Ջինեդին Ջիդանի գլխավորած խումբը եւս բաւարարուեցաւ ոչ ոքի արդիւնքով՝ 2:2:

Այս շրջանէն յետոյ «Աթլետիքոն» ունի 77, «Պարսելոնան» եւ «Ռեալը» 75 միաւոր:

«Չելսին» Յաղթանակ Կորգեց «Մանչեսթըր Սիթիի» Դէմ

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան 35-րդ հանգրուանի կեդրոնական խաղին մրցեցան «Մանչեսթըր Սիթիին» եւ «Չելսին»:

«Մանչեսթըր Սիթիին» յաջողեցաւ առաջինը բանալ հանդիպման հաշիւը: 44-րդ վայրկեանին աչքի ինկաւ Ստերլինգը: Մէկ վայրկեան ետք 11 մեթրանոց հարուածը չկրցաւ նշանակել մանչեսթըրեան ակումբի արժենթինացի յարձակող Սերխիո Ակուերոն: «Չելսին» երկրորդ կէսի մեկնարկին եւ աւելացուած վայրկեանին երկու գնդակ նշանակեց եւ յաղթանակ կորգեց այս խաղին:

Այս հանգրուանէն յետոյ «Մանչեսթըր Սիթիին» ֆրեմիեր Լիկայի մրցաշարային աղիւսակի առաջատարն է 80 միաւորով, իսկ «Չելսին» երրորդն է 64 կէտով:

«Պայրընը» Խոշոր Հաշուով Յաղթեց Միւնխենցլապախին

Գերմանիոյ ֆութպոլի առաջնութեան նորընծալ ախոյեան Միւնխիտի «Պայրընը» խոշոր հաշուով յաղթեց «Պորուսիսա Միւնխենցլապախին»:

Միւնխիտի մէջ կայացած խաղին «Պայրընը» 6 գնդակ ուղարկեց մրցակիցի դարպասը՝ սեփականը պահելով անառիկ: «Բաւարիա»-ի կազմին մէջ հեթ-տրիկի հեղինակ դարձաւ Ռոբերտ Մայիսի 8-ին՝ աւելի կանուխ, յայտնի դարձած էր, որ Գերմանիոյ ֆութպոլի առաջնութեան 2020/21 մրցաշրջանի ախոյեանը «Պայրընն» է:

«Ռոման» Յաղթեց Մեծ Հաշուով Միսիթարեանը Կոլի Հեղինակ

Հայաստանի ֆութպոլի ազգային խումբի կիսապաշտպան Հենրիխ Միսիթարեանը դարձաւ կոլի եւ կոլային փոխացման հեղինակ:

Խոտալիոյ առաջնութեան 35-րդ հանգրուանին «Ռոման» սեփական յարկի տակ ընդունեց «Կրոտոնէին»:

Առաջին կէսին դարպասի գրաւում չարձանագրուեցաւ: Սակայն, երկրորդ 45 վայրկեաններու ընթացքին «գալլերը» 5 անպատասխան գնդակ ուղարկեցին «Կրոտոնէի» բերդը: Հայաստանի ազգային խումբի աւագ Հենրիխ Միսիթարեանը «Ռոմաի» մեկնարկային կազմին մէջ էր, մասնակցեցաւ ամբողջ խաղին, դարձաւ երկու կոլային փոխանցման հեղինակ եւ մէկ անգամ ալ՝ 78-րդ վայրկեանին անձամբ աչքի ինկաւ դարպասի գրաւումով:

Այս յաղթանակէն յետոյ «Ռոման» Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակին վրայ բարելաւեց դիրքը մէկ աստիճանով եւ այժմ 7-րդն է: Աւելի կանուխ Խոտալիոյ ախոյեան հռչակուած էր «Ինտերը»:

«Լիվերփուլը» Ստադիր Չէ Վաճառել Մոհամէտ Սալահին

Անգլիական «Լիվերփուլը» մտադիր չէ վաճառել յարձակող Մոհամէդ Սալահին: 28-ամեայ եգիպտացի ֆուտպոլիստին ձեռք բերելու ցանկութիւն

Ընթիշ Կարէն Ասլանեանը Յաղթած Է Օտս Կարկանիշային Մրցաշարին

Հայաստանի յունահունական ոճի ըմբշամարտի հաւաքականի անդամ Կարէն Ասլանեանը յաղթեց Պուլկարիայի Օլիմպիական խաղերու համաշխարհային վարկանիշային մրցաշարի ընթացքին:

«Արմենպրես»-ի հաղորդումով դեռեւս նախօրէին Հայաստանի երկու ներկայացուցիչները 60կգ Արմէն Մելիքեանը եւ 67 կգ Կարէն Ասլանեանը, դուրս էին եկած եզրափակիչ ապահովելով Թոքիոյի Օլիմպիական խաղերու ուղեգիրը:

Մայիսի 9-ին կայացած եզրափակիչին Կարէն Ասլանեանի մրցակիցը հրաժարած է գօտեմարտէն՝ վնասուածքի պատճառով: Ասլանեանը դարձած է մրցաշարի յաղթող: 60 կգ քաշի պարագային Արմէն Մելիքեանը վնասուածքի պատճառով չէ ներկայացած եզրափակիչ գօտեմարտին:

Հայաստան այժմ ունի 8 օլիմպիական ուղեգրեր, որոնք նուաճած են մարմնամարզիկ Արթուր Դաւթեանը, յունահունական ոճի ըմբշներ Արթուր Ալեքսանեանը, Կարապետ Չալեանը, Կարէն Ասլանեանը, Արմէն Մելիքեանը, ազատ ոճային ըմբշներ Արսէն Յարութիւնեանը, Վազգէն Թեւանեանը, բռնցքամարտիկ Կորին Սողոմոնեանը:




Ճաբոնացիներու 59 Տոկոսը Դէմ Է Ողիմպիական Խաղերու Կայացման

Ճաբոնացիներու 59 տոկոսը կը ցանկայ, որ Ճաբոնի մայրաքաղաք Թոքիոյի մէջ կայանալիք 32-րդ ամառային Ողիմպիական խաղերը եւ Պարալիմպիկ խաղերը տեղի չունենան:

Հարցուածները եւս 23 տոկոսը կը կարծէ, որ խաղերը պէտք է ըլլան առանց հանդիսականներու, իսկ 16 տոկոսը կողմ է երկրպագուներու սահմանափակ քանակին, կը գրէ Yomiuri Shimbun-ն:

Աւելի կանուխ յայտնի դարձած էր, որ Թոքիո-2020-ը տեղի կ'ունենայ առանց արտասահմանցի երկրպագուներու: Սահմանափակումները կապուած են քորոնա ժահրի համաժարակի հետ:



Ալվարեսը 73 Հազար Հանդիսականի Ներկայութեամբ Յաղթեց Սոնդերսին Եւ Դարձաւ Աշխարհի Ախոյեան



ԱՄՆ-ի Արլինկթոն քաղաքի AT&T դաշտին մէջ տեղի ունեցած պրոֆեսիոնալ բռնցքամարտի երեկոյի գլխավոր մենամարտին սուփերմիջին քաշային կարգին WBC եւ WBA վարկածներով աշխարհի ախոյեան, մեքսիքացի Սաուլ Կանելո Ալվարեսը (56-1-2 38 նոկաուտ) տեխնիկական նոքաուտով պարտութեան մատնած է WBO վարկածով աշխարհի ախոյեան, բրիտանացի Պիլի Ճօ Սոնդերսին, որը 8-րդ ռաունտէն յետոյ դուրս չէ եկած ռինկ:

Մենամարտին խաղին հետեւած է 73126 հանդիսական: Քորոնա ժահրի համաժարակի սկսելէն յետոյ այս ամենամեծ մարզական միջոցառումն էր:

ուսի Լոնտոնի «Չելսին», կը հաղորդէ The Athletic-ը:

Սալահի տեղափոխման իրաւունքը «Չելսին» պատկանած է 2014-2016 թուականներուն: Այդ ընթացքին ան վարձակալութեամբ հանդէս եկած է իտալական «Ֆիորենտինայի» եւ «Ռոմայի» կազմերէն ներս:

Սալահի գործող պայմանագիրը «Լիվերփուլի» հետ նախատեսուած է մինչեւ 2023 թուականի ամառ: Սալահը 2017-ին «Ռոմայէն» տեղափոխուած է «Լիվերփուլ» 42 միլիոն եւրոյի դիմաց: